Այո, բուհի ղեկավարն եմ, բայց բուհի ղեկավարն ի՞նչ գիտի: Ինձ հարցնել՝ տեղյակ եղել եմ, թե՝ ոչ, հարցն առնվազն կոռեկտ չէ: Բնականաբար, ես չէի կարող իմանալ, թե ինչ է եղել: Տեղեկացել եմ Քննչական կոմիտեի հաղորդագրությունից... տեղյակ չեմ եղել, թե աշխատակիցներն ինչպիսի միջանձնային հարաբերություններ ունեն:

Կարդացեք՝ էջ 4

Հայաստանում հաստատվել է մի իրավիճակ, երբ ցանկացած քաղաքական ընդդիմախոսի կամ մեկին, որը համաձայն չէ իշխանության քաղաքականության հետ, որը նույնիսկ կենցաղային հարցերում բողոք ունի իշխանությունից, կարող են հռչակել ռուսաստանյան գործիք եւ առանց դատուդատաստանի ուղարկել բանտ կամ մտցնել գազային խցիկ:

Կարդացեք՝ էջ 5

Համոզված եմ, որ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում աշխատակիցներ կան, որոնք շատ լավ ընկալում են, եւ իրավիճակն իրենց դուր չի գալիս... այս գերության մեջ իրենք, այնուամենայնիվ, փորձում են մարդու իրավունքների պաշտպանության կողմը բռնել, ոչ թե ինչ-որ 150 հազար հոգու էթնիկ զտման ենթարկած թափթփուկների:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 113 (4248), 9 հուլիս, հինգշաբթի, 2026

www.hraparak.am

Մանդատները վերցնելու հետ կապված՝ խորհրդարան անցած ուժերի հայտարարությունից հետո ոչ միայն իշխանական, այլեւ ընդդիմադիր դաշտում դիրքավորվածներից ոմանք գրոհ են սկսել «Հայաստան» դաշինքի պատգամավոր, պատգամավորության թեկնածու Աղվան Վարդանյանի դեմ՝ պահանջելով հրաժարվել մանդատից, քանի որ ընտրություններից ամիսներ առաջ՝ փետրվարի 3-ին, հարցազրույցներից մեկում նա ասել էր. «Եթե ես մասնակցեմ ընտրություններին եւ ընդդիմության մեջ լինեմ, բայց իշխանությունը լինի Նիկոլ Փաշինյանը, մանդատից կհրաժարվեմ»: Հիմա ընդդիմադիր եւ իշխանական որոշ շրջանակներ կառչել են այս արտահայտությունից եւ փորձում են «թասիբի գցել» նրան, որ մանդատը չվերցնի: Իշխանությանը պետք է, որ փորձառու եւ գրագետ օրենսդիրի փոխարեն ԱԺ գնա անփորձ մեկը, որ մի ընդդիմախոս պակաս ունենան: Ընդդիմադիր այն շրջանակները, որոնք դուրս են մնացել ԱԺ-ից, յուրաքանչյուր մանդատավորի դեմ են մարտեր մղում: Մենք տեղեկացանք, որ դաշինքում քննարկվել է հարցը, եւ թիմը, եւ դաշինքի առաջնորդ Ռոբերտ Քոչարյանը դեմ են եղել Վարդանյանի՝ մանդատը վայր դնելուն՝ այն պատճառաբանությամբ, որ Փաշինյանին իշխանությունից հեռացնելու գործընթացը նոր է սկսվում, եւ Վարդանյանը չպետք է տրվի ոմանց սադրիչ կոչերին: Նաեւ այն պատճառով, որ այս խորհրդարանում ընդդիմությունը հիմնականում անփորձ պատգամավորներից է կազմված, ինչը մեծացնում է փորձառու գործիչների կարիքը: Ի դեպ, լուրեր կան, որ որպես «Հայաստան» դաշինքի խմբակցության ղեկավար Աղվան Վարդանյանին են տեսնում:

Մեր տեղեկություններով, ՔՊ-ական բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը վերջերս դիմել է Միացյալ Նահանգների լոսանջելեսյան հայկական մաֆիոզ շրջանակներին, մեր լեզվով ասած՝ ավտարիտետներին, որպեսզի իրեն աջակցեն խոշոր փողերի օրինականացման հարցում: Նախապես ճշգրտումներ է արել, որպեսզի հետո խոշոր գումար Հայաստանից ԱՄՆ տեղափոխի, ապա մաֆիայի օգնությամբ այդ գումարներն օրինականացնեն, ինչն էլ, իրավական լեզվով ասած՝ փողերի լվացում է նշանակում: Սովորաբար «հայկական մաֆիան» նման «լվացքի» միջոցով օրինականացնում է նարկոտիկի վաճառքից գոյացած միջոցները, բայց այս պարագայում ամերիկյան հանցավոր հայ շրջանակին հայտնի չէ փողերի ծագման աղբյուրը: Տեղեկատվությունը մեզ փոխանցած անձը խոստացավ գործարքն ավելի որոշակիանալու դեպքում լրացուցիչ մանրամասներ հաղորդել մեզ:

Սկանդալից սկանդալ

Միայն որեւէ սկանդալից հետո ենք մենք ուշքի գալիս ու հետաքրքրվում որեւէ ոլորտում տիրող իրավիճակով: Մանկապղծության դեպք է բացահայտվել, սկսում ենք հետաքրքրվել երեխաների իրավունքներով, անապահով ընտանիքներում երեխաների կյանքի պայմաններով, խնամքի հաստատություններում տիրող վիճակով: Բուհում կաշառակերության դեպք է բացահայտվել՝ սկսում ենք խոսել բուհական կրթության որակի, դասախոսների կոռումպացվածության, ուսանողների, նոր սերնդի՝ ուսման հանդեպ անտարբերության մասին: Ջրհեղեղ է եղել՝ սկսում ենք հետաքրքրվել, թե գետերի հուներն ինչու չեն մաքրվում, ինչու արգելապատնեշներ կառուցված չեն, համայնքներում ինչու կանխարգելիչ աշխատանքներ չեն իրականացվել նախապես: Գյուղատնտեսական մթերքները Ռուսաստանը չի՞ ընդունում՝ դեմքով շրջվում ենք դեպի գյուղ, գյուղացուն հարցնում ենք՝ ինչո՞վ եք ապրելու, սկսում ենք պարզել՝ ինչո՞ւ այլընտրանքային շուկաներ այս տարիներին պետությունը չի գտել, որ մեր արտադրանքը մնացել է մեկ՝ ռուսական շուկայի հույսին: Վերջապես՝ ո՞ր «խելացի» ուղեղի արդյունքում փակվեց գյուղատնտեսության նախարարությունը, երբ մենք ագրարային երկիր ենք համարվում, եւ արտահանման ենթակա ապրանքների մեջ մեծ տոկոս է կազմում գյուղացու արտադրանքը: Հիմա եկել է վայրի կենդանիների պահման ու կեցության հարցերով հետաքրքրվելու ժամանակը: Գագիկ Ծառուկյանի թանկարժեք առյուծին միտումնավոր, թե անզգուշությամբ անկման հասցնելը մեզ ստիպեց, որ հետաքրքրվենք, թե ինչ է կատարվում այդ ոլորտում: Նաեւ՝ թե ինչպես են խնամում եւ բուժում կենդանիներին, ինչ վիճակում է Երեւանի կենդանաբանական այգին: Իհարկե, նաեւ անդրադառնալ այն սադիզմին, որով պատժում են ոչ միայն մարդուն, այլեւ անմեղ էակներին՝ առյուծներին, այդ մարդուն ցավ պատճառելու համար:

Իշխանական կուլիսներում մտահոգված քննարկում են Նիկոլ Փաշինյանի ռուսաստանյան այցը: Հուլիսի 6-ին Եկատերինբուրգում անցկացված միջազգային արդյունաբերական ցուցահանդեսին մասնակցելու մեկնած Նիկոլ Փաշինյանը, որն ինքն էր նախաձեռնել այդ այցը, մեր տեղեկություններով, չի կարողացել համոզել Մոսկվային եւ կատարել իր հրապարակային խոստումը՝ լուծել արտահանումների հարցը: Հիշենք, որ ընտրություններից առաջ նա խրոխտ խոստանում էր, թե կգնա Մոսկվա, եւ մի քանի օրում բոլոր հարցերն իրենց տեղը կընկնեն: Փաշինյանը գնաց Մոսկվա, սակայն որեւէ հարց, հատկապես արտահանումների հետ կապված, լուծում չի ստացել: Ռուսական կողմը սառնասրտորեն լսել է նրան եւ կրկնել նախորդ պատասխանները՝ ձեր ապրանքները չեն համապատասխանում մեր շուկային: Մինչդեռ իրականում պարզ է, որ Փաշինյանին մղում են՝ հստակ ընտրություն կատարել ՌԴ-ի եւ ԵՄ-ի միջեւ: Նրանց անգամ Սամվել Կարապետյանի եւ Գագիկ Ծառուկյանի ճակատագիրը չի հետաքրքրում: Պահանջը մեկն է՝ հրաժարվել ԹՐԻՓՓ-ից եւ «ԵՄ-ի հետ խաղեր չտալ»:

ՔՆՆՉԱԿԱՆԻ ՊԵՏԸ ՊՊԾ ՊԵՏԻՆ Է ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ

Մենք պարբերաբար ներկայացնում ենք պետական պաշտոնյաների՝ տարբեր անձանցից ստացած նվերները, քանի որ օրենքը պարտադրում է թանկարժեք նվերները հայտարարագրել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում եւ որոշ նվերներ նաեւ հանձնել պետությանը, եթե դրանց արժեքը գերազանցում է թույլատրելի չափը: Այս անգամ նվեր ստացողը ՊՊԾ պետ Արթուր Գասպարյանն է: Հունիսի 23-ին Քննչական կոմիտեի նախագահ Արթուր Պողոսյանի կողմից նա պարգեւատրվել է: Այս մասին տեղեկանում ենք Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից: Պողոսյանը Գասպարյանին նվիրել է AWI 2496 ապրանքանիշի ոսկյա ծածկույթով եւ բնական կաշվե գոտիով ճապոնական ժամացույց: Ժամացույցն արժե 92 հազար դրամ: Այն նվիրել է Քննչական կոմիտեի գործունեությանն օժանդակելու եւ ՊՊԾ կազմավորման տոնի կապակցությամբ:

ԽՆԴԻՐ

ՈՐՈՇԵԼ ԵՆ ԱԶԱՏՎԵԼ ՄԵԿԻՑ, ՈՐՆ ՈՒՆԻ ԱԿՆՀԱՅՏ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

«Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ Կարինե Թորոսյանը կազմակերպության նախկին ղեկավար Նինա Կարապետյանցին օրերս ծանուցել է նրա անդամակցության դադարեցման մասին. ««Հելսինկյան ասոցիացիա» ԻՀԿ-ի 2026 թ. հուլիսի 3-ին կայացած արտահերթ ժողովում քննարկվել է Ձեր՝ կազմակերպության անդամակցության հետ կապված հարցը: Արձանագրվել է, որ Դուք, պատշաճ կերպով ծանուցված լինելով, չեք մասնակցել կազմակերպության հերթական երեք ժողովներին, ինչպես նաեւ ներգրավված եք այնպիսի քաղաքական գործունեության մեջ, որը, ժողովի գնահատմամբ, հակասում է կազմակերպության նպատակներին, արժեքներին եւ գործունեության սկզբունքներին: Նշված հանգամանքները հաշվի առնելով՝ ժողովը որոշում է կայացրել դադարեցնել Ձեր անդամակցությունը կազմակերպությանը»: Զարմանալիորեն, վերջին շրջանում ընդդիմադիր հայացքներ ունեցող բոլոր անձինք խնդիրներ են ունենում՝ նրանց հետ աշխատանքային պայմանագրերն են խզվում, նրանց հեռացնում են տարբեր մարմիններում անդամությունից, նրանց դեմ անհեթեթ քրեական վարույթներ են հարուցվում, նրանց ազգականներին են ազատում աշխատանքից եւ այլն: «Հրապարակը» զրուցել է **Նինա Կարապետյանցի** հետ, որը «Բոլորին դեմ եմ» կուսակցության վարչապետի թեկնածուն էր եւ մասնակցում էր ԱԺ ընտրություններին:

- «Հելսինկյան ասոցիացիա» կազմակերպության ո՞ր արժեքներին է Ձեր գործունեությունը հակասել: Չե՞ք փորձել ճշտել, թե Ձեր գործողություններում ինչը դուր չի եկել «Հելսինկյան ասոցիացիա»-ին:

- Այդ որոշման մեջ թերեւս ամեն ինչ ասված է: Եթե նշում են, որ ես իրենց արժեքներին, սկզբունքներին դեմ եմ, սակայն կոնկրետ չեն ասում, թե խոսքն ինչի մասին է, ես վերլուծել եմ իմ գործունեության ողջ ընթացքը եւ չեմ հիշում գեթ մեկ դեպք, երբ ես անցած լինեմ թույլատրելի սահմանները, ներառյալ՝ այս վեց ամսում: Ես մշտապես ասել եմ, որ իրավապաշտպանությունը մասնագիտություն չէ, այն ապրելակերպ է ու տեսակ: Այն, որ իմ քաղաքական գործունեությունը հակասում է «Հելսինկյան ասոցիացիա»-ին, դա մեկ բան է նշանակում՝ ըստ նպատակահարմարության որոշել են ազատվել այն մարդուց, որն ունի ակնհայտ ընդդիմադիր դիրքորոշում եւ քննադատում է ռեժիմին:

- Այսինքն՝ Նիկոլ Փաշինյանին քննադատելը «Հելսինկյան ասոցիացիա»-ի արժեքներին դեմ է:

- Այդ հարցին պետք է իրենք պատասխանեն: Ես եմ եղել այդ կազմակերպության ղեկավարը գրեթե տասը տարի եւ ես ունեցել եմ թիմակիցներ, ովքեր ունեցել են իրարից շատ տարբեր քաղաքական հայացքներ, ավելին՝ եղել են մարդիկ, ովքեր ընտրություններին մասնակցել են, տարբեր ընտրական ցուցակներում են ընդգրկվել, սակայն ես հրաժարվել եմ նրանց աշխատանքից ազատել, անկախ բոլոր այն հորդորներից, որոնք հնչել են: Ես միշտ եմ այն կարծիքին եղել, որ իրավապաշտպան կառույցից չեն կարող հրաժարվել մարդիկ՝ զուտ քաղաքական հայացքների համար: Դա նոնսենս ու աբսուրդ է: Լինել իրավապաշտպան, ներկայացնել իրավապաշտպան ՀԿ եւ մարդու սահմանադրական իրավունքը ոտնահարել, դա, մեղմ ասած, անոնորմալ երեւույթ է: Բայց պարզվում է՝ ոչ բոլորն են այդպես մտածում:

- Արժեքներից են խոսում այդ ՀԿ-ները, բայց բազմաթիվ հակասահմանադրական, մարդու իրավունքների դեմ գործողություններ են կատարվում իշխանությունների կողմից, սակայն ոչ մի ձայն չեն հանում իրենք: Ընտրախախտումներից մինչեւ մարդուն քաղաքական պատճառներով գետնին տապալել, այդ պրոցեսը նկարահանել եւ կալանքի տանել: Տպավորություն է, որ ոչինչ չեն տեսնում, չեն լսում:

- Ես հետեւում եմ երբեմն նրանց գրառումներին եւ մի բան եմ հասկանում՝ այս մարդիկ ոչ մի արժեքի կրող չեն: Խոսքը միայն մեկ-երկու կազմակերպության մասին չէ, խոսքը շատերի մասին է: Մարդիկ, ովքեր տարիներ շարունակ ֆինանսավորվել են մարդու իրավունքները պաշտպանելու համար, սահմանադրականությունը, ժողովրդավարությունը, արդար դատական համակարգը պաշտպանելու համար, այսօր այնպիսի արտահայտություններ են անում, այնպիսի գրառումներ են կատարում, որ ուղղակի զարմանում ես: Նրանց համար հիմքը միայն այն է, որ ինչ-որ մեկին կամ սիրում են, կամ չեն սիրում, կիսում են ընդդիմության տեսակետները կամ չեն կիսում, բայց իրավապաշտպանը չի կարող նման կերպ մտածել ու գործել: Անգամ ամենաստոր, ամենավատ մարդն ունի իրավունքներ, եւ դրանք պետք է հարգել, եթե, իհարկե, դու քեզ համարում ես իրավապաշտպան:

Նյութերը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

«ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏԸ» ՉԱՇԽԱՏԻ՝ ԻՐԱՆԻՑ ԿԱՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ ԿԲԵՐԵՆՔ

Գագիկ Ծառուկյանի նկատմամբ քրգործի շրջանակներում հուլիսի 6-ին խուզարկություններ են իրականացվել «Մուլտի գրուպ»-ի ավելի քան 70 հասցեում, այդ թվում՝ «Արարատցեմենտ» գործարանում: Խուզարկության ընթացքում աշխատակիցներին շտապ հեռացրել են տարածքից, անգամ չեն թույլատրել պատշաճ կարգով անջատել արտադրական սարքավորումները, վառարանները որի հետեւանքով վթարներ են տեղի ունեցել: Ըստ որոշ լուրերի, պատճառված վնասն այնքան մեծ է, որ գրեթե համարժեք է նոր գործարան կառուցելուն: Բացի այդ՝ Հայաստանի ամենամեծ ցեմենտի գործարանը կանգնած է, եւ դա կառուցապատման ոլորտի համար լրջագույն խնդիրներ է առաջացրել: Մեզ դիմած կառուցապատողները նշում են, որ շինարարական ընկերությունները ցեմենտի պաշարներ չեն կարող պահեստավորել՝ աշխատում են ընթացիկ մատակարարումների հաշվին, եւ եթե մինչեւ ուրբաթ օրը «Արարատցեմենտը» չվերագործարկվի, հանրապետությունով մեկ բազմաթիվ շինարարություններ կկանգնեն: Թեմայի մասին զրուցել ենք «Կառուցապատողների հայկական ասոցիացիա» ՀԿ նախագահ **Գուրգեն Գրիգորյանի** հետ:

- Կառուցապատողներն ասում են, որ «Արարատցեմենտ»-ի հետ կապված իրավիճակն էապես կարող է ազդել կառուցապատման աշխատանքների վրա, քանի որ Հայաստանի շինարարական ոլորտի զգալի մասը կախված է «Արարատցեմենտ»-ի մատակարարած ցեմենտից, իսկ գործարանն արդեն քանի օր է՝ չի գործում: Կառուցապատողներն ասում են՝ եթե մինչեւ ուրբաթ օրը խնդիրը չկարգավորվի, եւ ցեմենտ չմատակարարեն իրենց, կառուցապատման աշխատանքները հանրապետությունով մեկ կանգ կառնեն:

- Այս պահի դրությամբ կառուցապատողներից, որպես այդպիսին, բողոք չկա, որովհետեւ կան այլընտրանքային տարբերակներ, բնականաբար, եթե լինեն դժգոհություններ, այդ մասով կքննարկենք, այս պահի դրությամբ հանրային հնչեղություն ունեցող դժգոհության ալիք չկա:

- Ի՞նչ այլընտրանքի մասին է խոսքը: Հայաստանում նման ծավալի ցեմենտ արտադրող ուրիշ գործարաններ կա՞ն, որքանով մեզ հայտնի է՝ «Արարատցեմենտ»-ը միակն է:

- Քանի որ կառուցապատողները հանդիսանում են պատվիրատուներ, իրենք աշխատանքները պատվիրում են շինարարներին, շինարարներն են հայթայթում եւ մատակարարում բետոն, ցեմենտ եւ այլ նյութեր, հետեւաբար՝ կառուցապատողները չպետք է նման մտահոգություններ ունենան, իսկ թե շինարարներն ինչ մտահոգություններ ունեն այս պահին, այդ մասով չունեմ ինֆորմացիա:

- Ասում եք՝ շինարարները պետք է հայթայթեն, եւ կա այլընտրանք: Ինչի՞ մասին է խոսքը:

- Մշտապես եղել են բերելու տարբերակներ, եւ դրանք շարունակվում են, օրինակ՝ հարեւան Իրանից, այնտեղ մշտապես առկա է այն, եւ շինարարները միշտ էլ բերել են, եթե չեմ սխալվում՝ այլ ԱՊՀ երկրներից եւս ցեմենտ բերելու հնարավորություն կա, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունից, սակայն հիմա կոնկրետ խոսքն իրանական ցեմենտի մասին է:

- Բայց մասնագետներն ասում են, որ, նախ, իրանական ցեմենտը որակապես զիջում է հայկականին, դրան գումարած՝ դրսից ցեմենտ բերելը եւ Հայաստանում արտադրելը նույն բանը չեն, ժամանակի խնդիր կա, մատակարարումների պարբերականության խնդիր կա:

- Քանի որ այս պահի դրությամբ որեւէ ինֆորմացիայի չեմ տիրապետում, թե այն ինչ տնտեսական հետեւանքներ կարող է առաջացնել կառուցապատման շուկայի բնականոն աշխատանքի վրա, հետեւաբար, չեմ կարող հստակ պատասխանել Ձեր հարցերին, սակայն կարող եմ ասել, որ այդ ներմուծումները եղել են եւ շարունակվում են:

- Քանի՞ օր է տեւում ցեմենտն Իրանից բերելը:

- Չեմ կարող հստակ ասել:

- Իսկ կարծում եք՝ կարելի է հույսը դնել Իրանի կամ ՌԴ-ի վրա, թե՞ պետք է Հայաստանում ցեմենտ արտադրող գործարանից ստանալ այն:

- Ես այդ հարցից ձեռնպահ կմնամ, բայց կասեմ, որ Հայաստանում ինչքան շատ գործարաններ աշխատեն, այդքան ավելի լավ մեզ համար:

Ապստամբությունն էլ է իրավական ճանապարհ

Երեկ Սահմանադրական դատարանը հրապարակեց 7 քաղաքական ուժերի դիմումների վերաբերյալ ՍԴ ամբողջական որոշումը: ՍԴ նախկին դատավոր **Կիմ Բալայանից** հետաքրքրվեցինք՝ ծանոթացել է ՍԴ-ի 193 էջ ծավալով որոշմանը: Նա նշեց. «Արդեն ի՞նչ նշանակություն ունի, թե ինչ է գրված, ես համոզված էի, որ առնվազն 1-2 հոգի գոնե հատուկ կարծիք կգրեին, բայց որ հատուկ կարծիք էլ չեն գրել, նշանակում է, որ նրանք՝ բոլորը, Նիկոլի գրպանում են»: Հարցին՝ ՍԴ որոշման հրապարակումից առաջ Դուք մեզ հետ զրույցում նշել էիք, որ դրական ակնկալիքներ չունեք ՍԴ-ից, այդ դեպքում ինչո՞ւ էր այս որոշումն անսպասելի: Բալայանը նշեց. «Ես ասում էի, որ մեծամասնությունն է ենթարկվում Նիկոլին, բայց ես չէի մտածում, որ միասնական կլինեն: ԲՀԿ-ի մասով էլ օրենքի ակնհայտ խախտում է թույլ տրվել»: Անդրադառնալով այս իրավիճակում հարցի լուծման իրավական ճանապարհներին՝ Բալայանը նշեց. «Իրավական ճանապարհով գնալու մասին եթե խոսում ենք, ապստամբություն բարձրացնելն էլ է իրավական ճանապարհ, որովհետեւ, ակնհայտորեն, իշխանությունը հակաօրինական ճանապարհով է գործում, հետեւապես՝ այստեղ ապստամբություն բարձրացնելու իրավունքը կա: Չկա որեւէ բնագավառ, որտեղ օրինականությունն իշխի, դատախազին դիմում են՝ դատախազ գոյություն չունի. Նիկոլի գրպանում է, դատարան դիմում են, ՍԴ դիմում են՝ նույն վիճակն է, ԱԱԾ՝ նույն վիճակն է, այսինքն, ամբողջ Հայաստանի Հանրապետությունը ոչ թե կառավարվում է օրենքով կամ իրավունքի հիման վրա է կառուցված, այլ մեկ հոգու ցանկությունների հիման վրա: Ասում է նախօրոք՝ էսինչ մարդուն կկալանավորեն: Բա արձակուրդում գտնվող վարչապետը որտեղի՞ց է տեղյակ, որ մարդ պիտի կալանավորեն, եթե աշխատանքի մեջ լինի, կարող էին ասել՝ տեղեկացրել են, չնայած էլի ինքնուրույն պետք է գործեին, բայց եթե արձակուրդում է, որտեղի՞ց է տեղյակ: Գագիկ Ծառուկյանին նման կերպ ձերբակալելն էլ, միանշանակ, այդ մեկ մարդու ցանկությունն է, այլ տեսակետ չի կարող լինել: Ժողովրդին էդքան տառապանք պատճառողը բա մի հոգուն չի՞ անի»:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

Մեր ապրանքը եվրոպայում Ռուսաստանից թանկ ենք վաճառելու

Հայաստանից մի շարք ապրանքների՝ Ռուսաստան արտահանման արգելքից տնտեսվարողները փորձում են ելքեր գտնել: Նոր շուկաների որոնման հարցում կառավարությունը թեեւ հայտարարում է, որ աջակցում է արտադրողներին ու արտահանողներին, բայց դրանք միայն խոսքեր են, փաստացի, տնտեսվարողները մնացել են միայնակ:

Մեզ հետ զրույցում Գողթում գտնվող խոշոր ջերմոցներից մեկի տնօրեն **Մարկես Ղարիբյանը** նշեց, որ փորձում են արտահանում իրականացնել դեպի եվրոպական երկրներ. «Կամաց-կամաց փորձում ենք արտահանում իրականացնել: Արդեն կազմակերպել ենք, տեղաբաշխում արել ենք, արտահանումներն իրականացնում ենք, բայց դեպի Ռուսաստան արտահանում չունենք: Հիմա արտահանում իրականացնում ենք դեպի Եվրոպա, մասնավորապես՝ Լատվիա, Լիտվա, Բուլղարիա»: Իսկ արտահանման նոր շուկաներն ինչպե՞ս են գտել ու պայմանավորվել: «Մայիսի վերջին ես գնացել եմ մի քանի երկիր, հանդիպել, պայմանավորվել եմ, իրենց հրավիրել եմ Հայաստան, եկել են, տեղում ծանոթացել են մեր արտադրանքին, անգամ փորձնական խմբաքանակ չենք ուղարկել, հիմա ֆուռով ուղարկում ենք: Մեր ջերմոցները 15 հեկտար են՝ ծավալով երկրորդ տեղում են Հայաստանում»: Իսկ նոր շուկաներ գտնելու հարցում նշեց, որ կառավարությունը կամ էկոնոմիկայի նախարարությունը որեւէ կերպ չի աջակցել իրենց, բայց արտահանվող ապրանքները սուբսիդավորում են պետբյուջեից:

Անդրադառնալով հարցին, թե դեպի Ռուսաստան արտահանո՞ւմն էր ձեռնտու, թե՞ դեպի եվրոպական երկրներ, Ղարիբյանը պատասխանեց. «Այս պահին՝ դեպի Եվրոպա, այս փուլում նաեւ կառավարության ֆինանսավորմամբ է, որ ավելի ձեռնտու է, քանի որ մեր դիրքերը մի քիչ թույլ են, եւ դրանից ելնելով՝ եվրոպական երկրներն ավելի ցածր գին են առաջարկում, բայց դա ժամանակի ընթացքում կկարգավորենք: Բայց Ռուսաստանից ավելի թանկ ենք վաճառում, հաշվում եմ նաեւ լոգիստիկ ծախսերը: Առաջիկայում կարծում եմ՝ ավելի կբարձրանան գները, քանի որ հիմա, մեր արտահանման խնդիրներով պայմանավորված, մեզ ցածր գին են առաջարկում, մեր դիրքերը դեռ թույլ են»:

Նրա խոսքով, ՌԴ արգելքից հետո մինչեւ նոր շուկաներ գտնելը ֆինանսական մեծ կորուստներ են կրել. «Շատ մեծ կորուստներ ենք կրել, խոսքը գնում է հարյուրավոր միլիոնների մասին: Բայց, փառք Աստծո, հիմա սկսել ենք արտահանել, Ռուսաստանը մեզ թույլ տվեց նոր շուկաներ գտնել, որոնք կարող են ավելի շահավետ լինել: Բայց մեր վարդերը որ համեմատում ենք այլ երկրների հետ, օրինակ՝ Քենիայի, Եթովպիայի, Կոլումբիայի հետ, մեր վարդերն ավելի շատ թերթիկներ ունեն, ավելի փարթամ են»:

Նա նշեց, որ կառավարության փոխհատուցման ծրագրին դիմել են. «Պիտի թղթերը մուտք անենք, որ փոխհատուցումը տրամադրվի, իսկ փոխհատուցումը լինելու է ըստ արտահանած ծաղիկների քանակի, մեկ ծաղիկի հաշվով՝ 37 դրամ»:

ՀԳ. *Երեկ «Ալիքմեդիան» գրել էր, որ հայ-վրացական սահմանից հետո է վերադարձվել 22 հազար հատ ծաղիկ. Վրաստանի իշխանությունները դա բացատրել են ֆիտոսանիտարական նորմերի անհամապատասխանությամբ:*

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ՍԱՐԻԿԸ ՈՐՈՇԵԼ Է ԳՅՈՒՄՐԻԻՑ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ ԵՐԵՎԱՆ

«Քաղպայմանագիր» կուսակցության վարչության հերթական նիստում՝ երեքշաբթի օրը, քննարկվել է «Հայաստանի էլեկտրական ցանցերի» Շիրակի մարզային կառույցի տնօրեն, ինչպես նաեւ ՔՊ-ի Գյումրու քաղաքապետի պարտված թեկնածու, ավագանու ՔՊ խմբակցության ղեկավար Սարիկ Մինասյանի հարցը: Պարզվում է՝ Սարիկն իր վերցրած «ծանրաձողը գցել է ոտքին» եւ չի ուզում շարունակել պաշտոնավարումը ո՛չ ՀԷՑ-ի տնօրենի պաշտոնում, ո՛չ էլ ավագանիում՝ որպես խմբակցության ղեկավար, այլ ուզում է պատգամավորական մանդատը վերցնել ու գնալ խորհրդարան: Նա ՔՊ նախընտրական ցուցակի անցողիկ տեղում է:

Հիշեցնենք, որ ՀԷՑ-ը գործարար Սամվել Կարապետյանից խլելուց հետո՝ մոտ մեկ տարի առաջ ՀԷՑ-ի ժամանակավոր կառավարիչ Ռոմանոս Պետրոսյանը Սարիկ Մինասյանին նշանակեց էլցանցերի Շիրակի մարզային կառույցի տնօրեն՝ այն հաշվարկով, որ կառույցը «քպականացնի» եւ ծառայեցնի խորհրդարանական ընտրությունների ժամանակ քվեներ բերելու գործին, սակայն ոչ միայն Գյումրու ընտրություններին Սարիկն ապաշնորհ գտնվեց եւ չհաղթեց Վարդան Ղուկասյանին, այլ նաեւ խորհրդարանական ընտրություններում Գյումրիից շռնդալից արդյունքներ չապահովեց ՔՊ-ի համար: Սրան գումարած, կարծես ջրվում կամ առնվազն անորոշ ժամկետով հետաձգվում է Գյումրին զավթելու փաշինյանական ծրագիրը, որի մասին նա բացահայտ հայտարարեց հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունների նախընտրական քարոզարշավի ժամանակ: Քանի որ Գյումրու ոչ ՔՊ-ական ավագանիները կարողացան միասնականություն դրսեւորել: Նրանք իշխանության պատժիչ մեքենայի եւ կալանավորումների դեմ «հակաթույն» գտան՝ յուրաքանչյուր թիրախավորված անձ հրաժարվում է մանդատից, որ ավագանիում ճգնաժամ չառաջանա, եւ մանդատը փոխանցվում է հաջորդ թեկնածուին, ու ավագանին շարունակում է աշխատել, համայնքային իշխանությունը ընդդիմությունը չի կորցնում:

Հիմա Սարիկ Մինասյանն ուզում է ապահովագրել իր առաջիկա հինգ տարին եւ դառնալ կոճակ սեղմող՝ առանց մեծ պատասխանատվության բարձր աշխատավարձ ստանալ, հետեւաբար՝ որոշել է հրաժարվել թե՛ ՀԷՑ-ի տնօրենի, թե՛ ավագանու խմբակցության ղեկավարի պաշտոններից: Նրա շրջապատից մեզ ասացին, որ Սարիկը կարծում է, որ ինքը վաստակել է դա, երբեմնի բարձր հեղինակությունն ի շահ ՔՊ-ի է օգտագործել ու վարկաբեկվել:

Վարչությունում հավանություն են տվել նրա ցանկությանը, սակայն, ըստ մեր աղբյուրների, եթե պետք լինի, եւ իշխանությունը կարողանա Գյումրիում արտահերթ զարգացումներ գեներացնել, ապա Սարիկը նորից վայր կդնի մանդատը, կվերադառնա Գյումրի:

Նշենք, որ մանդատը վայր է դնում նաեւ քաղաքն այս պահին փաստացի կառավարող Ավետիս Առաքելյանը՝ ընտրված քաղաքապետ Վարդան Ղուկասյանի փեսան, որն աներոջ կալանավորումից հետո ի պաշտոնե դարձել է քաղաքապետ, քանի որ քաղաքապետի առաջին տեղակալն է: Ավետիս Առաքելյանն ընդգրկված է Սամվել Կարապետյանի առաջնորդած «Ուժեղ Հայաստանի» ցուցակում: Մեզ ասացին, որ մինչեւ վերջերս նա կամուկացի մեջ էր՝ գնա՞լ խորհրդարան, թե մնալ հայրենի Գյումրիում: Թերեւս, այս անորոշ վիճակն էր պատճառը, որ հետաձգվեց հուլիսի 3-ին հրավիրված ավագանու արտահերթ նիստը. այն նշանակվել է հուլիսի 15-ին: Իհարկե, նիստը հետաձգելու պաշտոնական պատճառաբանությունը եղավ այն, որ Կոմունիստական կուսակցության ավագանու անդամ Լուսինե Անանյանը գրություն է ներկայացրել առողջական խնդիրների մասին եւ խնդրել է նիստը տեղափոխել, սակայն իրականում Ավետիս Առաքելյանին ժամանակ է պետք եղել՝ կողմնորոշվելու եւ դիրքորոշում հայտնելու: Մանավանդ՝ ընդդիմությունն էլ սպասում էր ՍԴ որոշմանը:

Ըստ տեղեկությունների՝ հուլիսի 15-ին հրավիրված ավագանու արտահերթ նիստում նա կհայտարարի մանդատից հրաժարվելու մասին, նիստից հետո Գյումրիի ավագանին եռամսյա հանգստի կմեկնի, այլեւս նիստեր չեն գումարվի՝ մինչեւ սեպտեմբերի վերջը, իսկ դրանից հետո հնարավոր է առաջին տեղակալ ընտրվի Մարտուն Գրիգորյանի թիմակիցը, որը երեւի կին կլինի:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՀՈՒՅՍ ՈՒՆԵԻ, ՈՐ ԲԿԿ-Ի ՄԱՍՈՎ ԿՎԵՐԱԿԱՆԳՆԵՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Հրապարակի» զրուցակիցը ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, «Ժողովրդական համախմբում» կուսակցության երկրորդ համար **Վարդան Այվազյանն** է:

- Սահմանադրական դատարանը հրապարակել է քաղաքական յոթ ուժերի՝ ՍԴ դիմելու գործով որոշումը՝ 193 էջ ծավալով: Կարդացե՞լ եք այն:

- Եթե անկեղծ լինեմ՝ չէ, չեմ կարդացել, քանի որ ինձ հետաքրքիր չէ իրենց եզրակացությունը: Պետք է կարդամ եւ նյարդայնանամ, ներվերս քայքայեմ, դրա համար չեմ կարդացել:

- Իսկ Սահմանադրական դատարանի որոշումը սպասելի՞ էր Ձեզ համար:

- Այո, իհարկե, սպասելի էր: Ես կարծում եմ, որ ընդդիմադիր յոթ ուժերը, որոնք դիմել էին Սահմանադրական դատարան, ինձնից լավ գիտեին, որ չի լինելու որեւիցե արդյունք, եւ ամենահետաքրքիրն այն էր, որ ՍԴ ոչ մի դատավոր այս որոշման կայացմանը դեմ չի եղել, եւ հատուկ կարծիք անգամ չի ներկայացվել: Այսինքն՝ Սահմանադրական դատարանը որոշում է ընդունել միաձայն կերպով, բայց այս առումով ես մի փոքր հույս ունեի, որ գոնե «Բարգավաճ Հայաստան»-ի հետ կապված՝ Սահմանադրական դատարանը կվերականգնի օրինականությունը, որովհետեւ Ընտրական օրենսգիրքը հստակ ասում է՝ եթե ընտրատեղամասերում ընտրությունների արդյունքներն անվավեր են ճանաչում, ապա անպայման պետք է վերաքվեարկություն տեղի ունենա: Քաղաքացիների ընտրական իրավունքն ամրագրված է Սահմանադրությամբ: Մարդիկ քվեարկել էին կոնկրետ ուժին, ինչի արդյունքում 4 տոկոսանոց ուժ պետք է ձեւավորվեր Ազգային ժողովում, սակայն այդպես էլ չձեւավորվեց: Ստացվում է, որ մարդկանց սահմանադրական իրավունքը ոչնչացրին՝ ԿԸՀ-ի ձեռքով: Ինչպես տեսանք, Սահմանադրական դատարանն այստեղ էլ խնդիր չտեսավ եւ ԿԸՀ-ի որոշումն ուժի մեջ թողեց: Սահմանադրական դատարանի որոշումները վերանայման ենթակա չեն, դրանց հետ կապված դիտողություններ եւ տեսակետներ չեն լինում, այդ պատճառով էլ անելիք այս մասով չկա այլեւս:

- Սահմանադրական դատարանի նիստերը բավականին շատ քննարկվեցին, քանի որ մենք ականատես եղանք մի բանի, որն առաջներում երբեք չէինք տեսել: ՍԴ դատավորներից ոմանք քաղաքական ելույթներ էին ունենում բարձր դատարանում՝ չէին թաքցնում իրենց համակրանքն իշխանությունների նկատմամբ, նիստը վերածում էին քաղաքական բանավեճի եւ այլն: Այս ամենն օրենքի տեսանկյունից նորմա՞լ է:

- Սահմանադրական դատարանի մասին սահմանադրական օրենքում, ինչպես նաեւ Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում հստակ գրված է, որ ոչ միայն ՍԴ դատավորները, այլեւ բոլոր դատավորները պետք է ունենան քաղաքական չեզոքություն եւ զսպվածություն, բնականաբար՝ հատկապես դատական գործընթացի ժամանակ չի կարելի քաղաքական դիտարկումներ անել, իսկ հարցադրումները պետք է լինեն բացառապես իրավական հարթության վրա, այլ ոչ թե՝ քաղաքական:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԲՐՅՈՒՍՈՎ

ԱՅԴՔԱՆ ՏԱՐԻ Է ԱՆՑԵԼ՝ ՆՈՐ ԻՄԱՑԱՆ, ՈՐ ԱՅԴ ՇԵՆՔԸ ԲՐՅՈՒՍՈՎԻ ՁԵՌՔԻՑ ԱՌԵԼ ԵՆ

Նյութերը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Վերջերս Բրյուսովի անվան համալսարանը հայտնվել է իրավապահների թիրախում: Մայիսին ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ Գայանե Եղիազարյանը եւ մի քանի դասախոս ձերբակալվեցին՝ կաշառքի մեղադրանքով: Իսկ օրերս Ազգային անվտանգության ծառայությունը հաղորդեց, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով մեղադրանք է առաջադրվել Բրյուսովի անվան պետական համալսարանի պաշտոնատար անձին՝ ամբիոնի վարիչին, ծառայողական լիազորություններն օգտագործելով հովանավորչություն կատարելու համար, որի դիմաց ստացել է կաշառք: Մասնավորապես՝ նախաքննությամբ պարզվել է, որ հիշյալ պաշտոնատար անձը կազմակերպել է համալսարանի նույն ամբիոնի երկու դասախոսի՝ դասապրոցեսների ընթացքում չնախատեսված արձակուրդ տրամադրելու, դասաժամերն այլ դասախոսներին բաշխելու գործընթացը եւ դրա դիմաց 2025 թվականի հոկտեմբերին որպես կաշառք ստացել տարբեր չափերի գումար:

Բացի այդ, ամբիոնի վարիչն ասպիրանտի օգտին հովանավորչության, այն է՝ ատենախոսության պաշտպանության գործընթացն անխոչընդոտ կազմակերպելու նպատակով ընդունել է վերջինիս կաշառք տալու առաջարկը եւ 2025 թվականի դեկտեմբերին նրանից որպես կաշառք ստացել ոսկյա զարդ: Ամբիոնի վարիչին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (3 դրվագ), իսկ նրան կաշառք տված 3 դասախոսներին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Սակայն այս անգամ, ի տարբերություն նախորդի, ամբիոնի եւ վարիչի անունը չեն նշում:

Ամբիոնի վարիչի նկատմամբ որպես խափանման միջոցներ են կիրառվել բացակայելու արգելքը եւ պաշտոնավարման կասեցումը: Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

Այս բոլոր խախտումներն ու ենթադրյալ հանցանքները տեղի են ունենում ռեկտոր Դավիթ Գյուրջինյանի «քթի տակ», եւ, փաստորեն, բուհում անտերություն է տիրում, ամբիոնի վարիչներն ուսանողներից եւ անգամ դասախոսներից կաշառք են վերցնում, ինչ-որ խարդախություններ անում, դրա դիմաց ոսկե զարդեր նվեր ստանում, իսկ բուհի ռեկտորը պատասխան չի տալիս: Եթե անգամ նա այս դեպքերին մասնակից չէ, ապա պաշտոնեական անփութություն կամ հանցավոր անգործություն է դրսեւորել, եւ դա նշանակում է, որ առնվազն իր տեղում չէ, չգիտի, թե որոնք են ռեկտորի գործառույթները, չի վերահսկում իրավիճակը բուհում: Իսկ ինչպիսի դժվարությամբ, խախտումների, դասախոսների եւ ուսանողների դիմադրությունը կոտրելու ճանապարհով Դավիթ Գյուրջինյանին ժամանակին ռեկտոր կարգեցին Բրյուսովում:

Եթե ռեկտորը յուրային չլիներ, ընդդիմադիր հայացքներ ունենար, նա կամ կալանավայրում կլիներ, կամ, լավագույն դեպքում՝ նրա նկատմամբ էլ քրեական վարույթ նախաձեռնված կլիներ, սակայն Դավիթ Գյուրջինյանին Նիկոլ Փաշինյանի իրավապահները հարցեր չունեն:

Մենք կապ հաստատեցինք Բրյուսովի անվան համալսարանի ռեկտորի՝ **Դավիթ Գյուրջինյանի** հետ եւ հետաքրքրվեցինք՝ տեղյակ չի՞ եղել, թե իր ղեկավարած բուհում աշխատակիցներն ինչով են զբաղվում: Նա, անդրադառնալով թեմային, ասաց. «Ինձ հարցնել՝ տեղյակ եղել եմ, թե՝ ոչ, այդ հարցն առնվազն կոռեկտ չէ: Բնականաբար, ես չէի կարող իմանալ, թե ինչ է եղել: Տեղեկացել եմ Քննչական կոմիտեի հաղորդագրությունից եւ, բնականաբար, տեղյակ չեմ եղել, թե աշխատակիցներն ինչպիսի միջանձնային հարաբերություններ ունեն: Ինչպես Դուք, այնպես էլ՝ ես»: Բայց Դուք բուհի ռեկտորն եք: «Այո, բուհի ղեկավարն եմ, բայց բուհի ղեկավարն ի՞նչ գիտի: Ես տեսնո՞ւմ եմ այդ զարդը, ասում են՝ մեկ գրամ է, հավատա՞մ, չեմ հավատում: Սպասում ենք իրավապահների գնահատականներին եւ հարցի լուծմանը»,- ասաց մեր զրուցակիցը: Բայց, օրինակ, Արմեն Աշոտյանին կալանքի տակ են պահում, որովհետեւ նրա՝ կրթության նախարար եղած ժամանակ Բրյուսովից ինչ-որ տարածքներ են սեփականաշնորհվել, կամ՝ երբ եղել է Բժշկական համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահը, բուհն ինչ-որ գնում է կատարել, որի մեջ իրավապահները խնդիրներ են տեսել: Նախկին նախարարն ու հոգաբարձուների խորհրդի նախագահը մեղավոր են, գործող ռեկտորը մեղավոր չէ՞. երբ Ձեր ղեկավարության շրջանում է բուհում նման կաշառակերություն տիրում, դրանում Ձեր մեղքը չկա՞: «Բրյուսովում այդքան ամբիոններ կան, ես ի՞նչ պետք է անեի՝ ութ ժամ նստեի, տեսնեի՝ ով ինչ է անում: Ինչ վերաբերում է այդ նախկին դեպքերին, ապա այդքան տարի է անցել, թող բռնեին եւ հարցին լուծում տային, դրանից հետո երեք-չորս ռեկտոր է այստեղ փոխվել, նո՞ր իմացան, որ այդ շենքը Բրյուսովի ձեռքից առել են»:

2 տարի խոստանալուց հետո սկսել են վերականգնել

2024 թ. մայիսի 27-ի ջրհեղեղը մեծ վնասներ պատճառեց Տավուշի մարզին: Այն Դիլիջան համայնքի տարածքում 10 տեղ քանդեց Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի եզրերը: 2025 եւ 2026 թվականներին բազում տեղեկատվական հարցումներ եմ արել Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին, թե ջրհեղեղից քանդված ավտոճանապարհի եզրերը երբ են վերականգնելու: Մարզպետի աշխատակազմից բազում անգամ հայտնել են, որ մինչեւ տարեվերջ վերականգնելու են: Սակայն Դիլիջան-Իջեւան Մ4 միջպետական ավտոճանապարհի ջրհեղեղի հետեւանքով վնասված 10 ճանապարհահատվածների վերակառուցման գործն օրերս է սկսվել: Վերականգնվող տեղամասերը ներառում են նաեւ Թեղուտ եւ Հաղարծին բնակավայրերի որոշակի տարածքներ: Իրականացվում են հենապատերի կառուցման եւ վերականգնման, որոշ հատվածներում գետի հունի մաքրման, ինչպես նաեւ վնասված ճանապարհահատվածների ասֆալտբետոնե ծածկի վերականգնման աշխատանքներ: Ծրագիրն իրականացվում է տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության կողմից, շինարարական աշխատանքներն իրականացնում է «Մոստկոնտրակտ» ՍՊԸ-ն:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

23 ՏԱՐԻ ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԻՆՁ ԹՈՇԱԿԻ ԵՆ ՈՒՂԱՐԿՈՒՄ

Իրավապաշտպան, փաստաբան Ռուբեն Մելիքյանը տեղեկացրեց, որ Երեւանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի ստորագրությամբ ծանուցում է ստացել այն մասին, որ այս տարվա սեպտեմբերի 1-ից ինքն այլեւս չի դասավանդելու մայր բուհում: Իբրեւ թե աշխատանքային պայմանագիրն ավարտվել է: Բայց թե ինչու չեն երկարացնում այդ պայմանագիրը՝ չեն տեղեկացրել:

«Ինձ համար ակնհայտ է, որ այս որոշումը պայմանավորված է իմ իրավապաշտպանական գործունեությամբ ու հանրային ակտիվությամբ, քանի որ ինձ չի ներկայացվել եւ չէր էլ կարող ներկայացվել բուն դասավանդման որակի վերաբերյալ որեւէ նկատառում: Հակառակ մեծ զբաղվածությանս, համալսարանական նոր սերունդների կրթությանը տասնամյակներ շարունակ իմ լուման ներդնելու որոշումս առաջին հերթին պայմանավորված է եղել մայր կրթօջախի նկատմամբ ունեցածս բարոյական պարտավորությամբ: Ուստի մայր բուհում 23-ամյա դասախոսական աշխատանքս ավարտում եմ հանգիստ խղճով ու բացճակատ: Միեւնույն ժամանակ, ԵՊՀ ռեկտորի պաշտոնը ժամանակավորապես զբաղեցնող անձի այս որոշումը դիտարկում եմ որպես կամայականության ու ապօրինության դրսեւորում: Այն փոքր կաթիլ է Հայաստանի «ադրբեջանացման» հրեշավոր ծրագրում, որի կարեւոր բաղադրիչ է գիտակրթական համակարգի վերթինգը: Այս առումով, իմ հանդեպ կայացված որոշումը ո՛չ առաջինն է, ո՛չ էլ, ցավոք, վերջինը:

ՀԳ. Կրթական ու գիտական գործունեությունս, բնականաբար, շարունակելու եմ: Մոտ օրերս կհայտարարեմ Մխիթար Գոշի Հայոց դատաստանագրքի վերաբերյալ մենագրությանս շնորհանդեսի օրը: Շուրջ 6 տարվա աշխատանքս շուտով կհանձնեմ ընթերցողի դատին, ու կտեսնեք՝ որքա՞ն նման են ժամանակները: Այն ժամանակ նույնպես մարդիկ պայքարում էին Հայաստանը «ապահայկականացման» ծրագրի դեմ ու նույնպես ենթարկվում էին տարատեսակ հալածանքների»,- գրել է Մելիքյանը:

Իսկ ի՞նչ պատճառաբանությամբ է Հովհաննես Հովհաննիսյանը դադարեցրել համագործակցությունը Ռուբեն Մելիքյանի հետ, թեպետ այս բուհում վաղուց են ընդդիմադիր հայացքներ ունեցող դասախոսները թիրախի տակ հայտնվել՝ Գեւորգ Պետրոսյան, Աբրահամ Գասպարյան, Մենուա Սողոմոնյան, Աստղիկ Ավետիսյան, Անուշ Սեդրակյան, Դավիթ Սարգսյան, այլք: Ի դեպ, փորձառու եւ սիրված դասախոսներին փոխարինելու են գալիս անդեմ եւ ոչ պրոֆեսիոնալ սկսնակներ, որոնք իշխանությունների հետ կապեր ունեն կամ նրանց քարոզիչներն են: Այս ամենը հերթական անգամ ապացուցում է, որ մայր բուհի խնդիրը ոչ թե հմուտ մասնագետներին ավելի հմուտ եւ բանիմաց դասախոսներով փոխարինելն է, այլ ուղղակի նրանցից ազատվելը, քանի որ վերջիններս ընդդիմադիր են եւ քննադատում են Նիկոլ Փաշինյանին: Ի դեպ, նախկին որեւէ իշխանության ժամանակ նման նախադեպեր որեւէ բուհում չեն եղել: Նույն՝ Երեւանի պետական համալսարանի դասախոսների գերակշիռ մասը նախկին բոլոր իշխանությունների ժամանակ եղել է ընդդիմադիր, սակայն նրանք չեն հալածվել, աշխատանքից չեն հեռացվել:

Ռուբեն Մելիքյանը, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով ստեղծված իրավիճակի մասին, ասում է. «Աշխատանքային օրենսգրքի այն հոդվածն են նշել, որը վերաբերում է ժամկետային պայմանագրին, այդքան բան: Որեւէ պարզաբանում չեն տվել, չեն անդրադարձել իմ դասախոսական գործունեության որակին, կարգապահությանը եւ այլն: Սա հերթական կամայական որոշումն է, սակայն այս ամենն ինձ համար խիստ տրամաբանական է, քանի որ մենք ապրում ենք Նիկոլ Փաշինյանի ղեկավարած Հայաստանում: Պատճառն իմ իրավապաշտպանական ակտիվությունն է, հանրային գործունեությունս: 23 տարի մայր բուհում դասավանդելուց հետո ինձ այժմ թոշակի են ուղարկում: Այս պահին երկրորդական եմ համարում այս որոշումն իրավական հարթության վրա բողոքարկելը: Համալսարանի ղեկավարությունը բացահայտ վերթինգի է ենթարկում ոչ իշխանական դասախոսներին: Ի դեպ ասեմ, որ ընդամենը 70 հազար դրամից քիչ աշխատավարձ էի ստանում, ինչպես գրառման մեջ նշել էի, աշխատանքիս մոտիվացիան բարոյականության շրջանակներում էր՝ մայր կրթօջախի նկատմամբ»:

ՅՈՒՅՑ

Փաշինյանական ռեժիմի պրոպագանդիստ Դանիել Իոաննիսյանը հայտարարում է, որ Հայաստանում Սահմանադրությունը եւ մյուս բոլոր օրենքներն այլեւս չեն գործում, գործում է նպատակահարմարությունը: Եթե այս մեկին պետք է կալանավորել, ուրեմն կկալանավորեն, եթե անգամ նա որեւէ օրենք չի խախտել: Անմեղության կանխավարկած, հանցանքի ապացույցներ եւ մնացած բոլորն անիմաստ եւ անպիտան բաներ են: Հայաստանը փաստացի վերածվում է նացիստական պետության, Փաշինյանի ռեժիմի գաղափարախոսությունը նացիզմն է, շատ նման այն գաղափարախոսությանը, որը 1933-45 թվականներին իշխում էր Գերմանիայում: Գերմանիայում էլ մարդուն կարող էին կալանավորել եւ մահվան դատապարտել ոչ թե հանցանք գործած լինելու հիմքով, այլ այն պատճառով, որ նա հրեա է, կոմունիստ կամ այլախոհ: Ֆաշիզմը միայն սկզբում էր ուղղված առանձին վերցված ազգի եւ նրա ներկայացուցիչների դեմ, հետագայում այն վերածվեց անհանդուրժողականության՝ ցանկացած այլակարծության եւ այլախոհության դեմ:

Դանիել Իոաննիսյանը ֆեյսբուքյան իր գրառման մեջ արդարացնում է ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանի կալանավորումը: Նա գրում է. «Իշխանությունների ուղերձը հստակ է.ով իր կամքով ու գիտակցված կերպով Հայաստանի դեմ ռուսաստանյան գործիք դարձավ, լուրջ պրոբլեմներ է ունենալու: Այդ ուղերձը հղում են Ծառուկյանի գործով, այդ ուղերձը հղում են «կքվեարկենք ու վաղը 7-ին հետ ենք թռնում, կարող ա ստեղ խառը լինի» ասողի գործով, այդ ուղերձը հղում են օդակայաններում ռազմական ոստիկանությամբ, այդ ուղերձը հղում են մի շարք ուրիշ ձեւերով»: Այսպիսով Իոաննիսյանն ընդունում է, որ Ծառուկյանին ներկայացված մեղադրանքները՝ փողերի լվացում, հարկերից խուսափում եւ այլն, կեղծ եւ հորինված մեղադրանքներ են, նրա միակ մեղքն այն է, որ նա քարոզարշավի ժամանակ հանդես է եկել Ռուսաստանի հետ բնականոն հարաբերություններ հաստատելու օգտին: Իոաննիսյանը եւ Փաշինյանը դա համարում են «Հայաստանի դեմ ռուսաստանյան գործիք դառնալ»: Նախընտրական շրջանում Փաշինյանը Ծառուկյանին մեղադրանք ներկայացրեց Ռուսաստանի հատուկ ծառայությունների հետ կապ ունենալու, նույնիսկ գործակալ լինելու մեջ, բայց որեւէ ապացույց չներկայացրեց: Հիմա արդեն այդ ապացույցը ներկայացվում է. Իոաննիսյանն ասում է, որ Փաշինյանը եւ ինքը Հայաստանն են, եւ բոլոր նրանք, ովքեր դեմ են իրենց, ռուսաստանյան գործիք են: Եթե ռուսաստանյան գործիք չլինեին, ինչո՞ւ պետք է իրենց դեմ դուրս գային, մյուսների նման կհամագործակցեին իրենց հետ:

Գիտե՞ք, թե ինչում էր Ադոլֆ Հիտլերը մեղադրում հրեաներին՝ Գերմանիայի տնտեսական եւ մշակութային հետընթացի, զարգացմանը խոչընդոտելու մեջ: Նացիստները հրեաներին մեղադրում էին առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի շահերին դավաճանելու մեջ, նրա թշնամիների՝ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի օգտին աշխատելու «գործիք դառնալու», ինչպես նաեւ՝ Գերմանիայի հարստությունն իրենց ձեռքում կենտրոնացնելու մեջ, ինչի արդյունքում հասարակ գերմանացիներն ապրում էին աղքատության պայմաններում: Հրեաները դավաճան էին եւ հարստահարիչ, իսկ նմանների դեմ պայքարի ամենաարդյունավետ մեթոդը նրանց ունեզրկելն ու գույքը յուրացնելն էր, նրանց կալանավորելը եւ համակենտրոնացման ճամբարներ ուղարկելը: Նրանց նույնիսկ չէին էլ դատում, որովհետեւ ի՞նչ իմաստ ունի դատել մարդուն, երբ նրա մեղքն արդեն ապացուցված է՝ նա հրեա է: Հիտլերը եւս համարում էր, որ հրեաների դեմ պայքարի քվեն իրեն տվել է գերմանացի ժողովուրդը, նա հայտարարում էր, որ կատարում է ժողովրդի կամքը, իսկ ժողովրդի կամքի հետ համեմատած՝ բոլոր տեսակի սահմանադրությունները կամ օրենքները կորցնում են իրենց նշանակությունը:

Անդրադառնալով Հայաստանում սկսված ռեպրեսիաներին՝ Իոաննիսյանը գրում է. «Այդ գործերի մեծ մասի օրինականությունը, մեղմ ասած, վիճելի է: Այդ բոլոր գործերով պրոցեսները, բնականաբար, զուտ քրեադատավարական չեն: Բայց ուղերձը հստակ է: Արդյո՞ք սա իրավական պետության սղաճ կամ նահանջ է: Իհարկե, սղաճ ու նահանջ է: Արդյո՞ք ռուսաստանյան այս գործողությունների ֆոնին կան լավ սցենարներ: Չէ, չկան: Կան վատ սցենարներ ու շատ վատ սցենարներ: Առայժմ վատ սցենարն է:

ՀԳ. *Որեւէ մեկը կարծում էր, որ Ռուսաստանը կարա որոշի մեր ժողովրդավարությունը վարի տալ, իսկ մենք այդ ֆոնին կկարողանանք Շվեդիա դառնալ»:*

ՉԷ ՄԻ ՉԷ՝ ՇՎԵԴԻԱ, ԴՈՒՔ ԵՐԿԻՐՆ ՕՍՎԵՆՑԻՄ ԵՔ ՍԱՐՔՈՒՄ՝ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Չէ, Ռուսաստանը չի կարող «վարի տալ» ժողովրդավարությունը, որովհետեւ մի բան վարի տալու համար նախ այդ բանը պետք է լինի՝ գոյություն ունենա: Հայաստանի եղած ժողովրդավարության փշրանքները Փաշինյանը վաղուց է վարի տվել: Այսպիսով Հայաստանում հաստատվել է մի իրավիճակ, երբ ցանկացած քաղաքական ընդդիմախոսի կամ ընդհանրապես ցանկացած մեկին, որը համաձայն չէ իշխանության կողմից վարվող քաղաքականության հետ, որը նույնիսկ կենցաղային հարցերում բողոք ունի իշխանությունից, կարող են հռչակել ռուսաստանյան գործիք եւ առանց դատուդատաստանի ուղարկել բանտ կամ՝ մտցնել գազային խցիկ: Դանիել Իոաննիսյանն ապագայում կարող է նշանակվել «ռուսաստանյան գործիքների» ուտիլիզացիայի կենտրոնի կամ ճամբարի տնօրեն: Համոզված ենք, որ նա մեծ ճաճույքով կսեղմի գազային խցիկի այն կոճակը, որի արդյունքում գազը կսկսի լցվել խցիկ եւ շնչահեղձ անել ռուսաստանյան գործիք հռչակվածներին, նրանց ծնողներին, կանանց եւ նույնիսկ մանկահասակ երեխաներին: Գործիքը ծնվում է գործիքից, եւ նրանից ծնվածներն էլ գործիքներ են. կհիմնավորի մերօրյա ֆաշիզմի տեսաբանը՝ արդարանալով, որ սա, իհարկե, վատ ճանապարհ է, բայց ուրիշ ելք ուղղակի չկա:

Չէ մի չէ՝ Շվեդիա, դուք երկիրն Օսվենցիմ եք սարքում՝ թուրքական վերահսկողության տակ:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԴՈՒՔ ՄԵՑ ՀԱՄՈՁԵՑԻՔ, ՈՐ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ «ԾԱՆՐ» ՀԵՏԵՎԱՆՔԸ ՉԻ ՀԵՌԱՑՎԻ

Նիկոլ Փաշինյանի իշխանության ամենածանր հետեւանքն ինքը՝ Նիկոլ Փաշինյանն է: Մտքով, թեկուզ, հեռացրեք նրան քաղաքական ասպարեզից, եւ ամեն ինչ իր տեղը կընկնի: Անմիջապես կդադարեն անիմաստ ձերբակալությունները, կվերանա մտացածին պատերազմի վտանգը, կլռեն Արեւմտյան Ադրբեջանի եւ 300 հազար ադրբեջանցիների վերադարձի մասին խոսակցությունները, ռուսական շուկան կբացվի Հայաստանի առջեւ, գազը չի թանկանա, Երեւանում երթեւեկությունը կկարգավորվի, նորից կսկսի գործել առողջապահության համակարգը, խելամիտ ձեւով կբարձրանան թոշակները, ամեն մեկը կզբաղվի իր գործով, եւ կյանքը կամաց-կամաց կընկնի հունի մեջ: Այլապես սա ի՞նչ է… Մի ողջ երկիր մնացել է ինչ-որ պահի, ինչ-ինչ հանգամանքներում իշխանության եկած խմբակի ձեռքում եւ 9-րդ տարին է, ինչ հեծում է դրա ծանր հետեւանքի, այսինքն՝ Նիկոլի տակ: Մարդն իր ձեռքն է հավաքել ամեն ինչ եւ անվրդով իշխում է՝ չանելով որեւէ քայլ, որ կնպաստեր այդ երկրի առաջընթացին:

Լավ, ի՞նչ անենք, որ ազատվենք 2018 թվականին մեզ բաժին հասած այս ծանր հետեւանքից: Սահմանադրությունն ու զանազան օրենսգրքերը հատուկ դեղատոմս չեն առաջարկում, քաղաքական գործի՞չները՝ նույնպես: Անընդհատ միասնության ու միասնաբար գործելու կոչեր ենք լսում, բայց ո՛չ կարողանում ենք միասնական լինել, ո՛չ էլ միասնաբար պայքարել… Հենց սկսում ենք եռալ, մի անզգույշ ձեռք բարձրացնում է կաթսայի կափարիչն ու գոլորշին բաց թողնում: Վերցնենք թեկուզ վերջին ընտրությունները: Թվում էր՝ վերջ, հետեւանքն ուր որ է՝ կհեռացվի (կվերացվի), բայց տեսա՞ք, թե ինչ արեց երկրի բարձր դատարանը: Եթե ընտրակեղծիքների մասին այնքան փաստ, ինչքան մեր ընդդիմությունը ներկայացրեց, հայտնվեր մեկ այլ երկրի բարձր դատարանի տրամադրության տակ, ոչ միայն ուժի մեջ չէր թողնի ԿԸՀ-ի որոշումը, այլեւ ԿԸՀ նախագահին ու «հաղթած ուժին» նույն բեռնատար շարժակազմով կուղարկեր ոչ այնքան հեռավոր վայրեր՝ հանրօգուտ աշխատանքների: Փաստորեն, ՀՀ ՍԴ-ն չար կատակ խաղաց ժողովրդի գլխին՝ երկարաձգելով չարիքի իշխանության ժամկետը, բաց թողնելով ծանր հետեւանքը վերացնելու նպատակով ընտրատեղամասեր գնացած մոտ 550 հազար քաղաքացիների ներքին գոլորշին: Դուք էլ, հավանաբար, կարդացիք ՍԴ որոշման երկարաշունչ տեքստը: Ձանք չէին խնայել՝ ապացուցելու համար, որ տեղի ունեցածն իսկապես ընտրություններ էին, եւ այդ ընտրություններում, չնայած աղաղակող եւ անթույլատրելի խախտումներով, հաղթել է մեզ բաժին հասած ծանր հետեւանքը: Բայց մի հարց տամ մեր բարձր դատարանին… Բարձր դատարան, էլի ի՞նչ պիտի աներ այս հետեւանքը, որ դուք որոշեիք չեղարկել ընտրությունները: Երեւի պիտի ընտրատեղամասերում մա՞մրդ ուտեին: Պետական լծակների անխնա գործադրում, օրինականացված ընտրակաշառք, տասնյակ հազարավոր անճշտություններ, տասնյակ հազարավոր անվավեր քվեաթերթիկներ, տասնյակ հազարավոր անհամապատասխանություններ՝ մասնակիցների եւ գրանցամատյաններում դրված ստորագրությունների թվի միջեւ, ԲՀԿ-ի 60 հազար ձայնի փոշիացում ԿԸՀ-ի մեկ որոշումով: Եվ դուք, բարձր դատարան, էս էշի հարսանիքն ընտրությո՞ւն եք որակում: Դուք ձեր որոշումով ավելի ծանրացրիք մեզ բաժին հասած ծանր հետեւանքը, մինչդեռ պարտավոր էիք պայքարել դրա դեմ: Բարձր դատարանի հարգելի դատավորներ, դուք լքեցիք ձեր խրամատը եւ ենթարկվեցիք, մոռացաք, որ գտնվում եք երդման ներքո: Դուք վերջնականապես սպանեցիք արդարադատությունը մեր երկրում եւ միեւնույն ժամանակ հասկացրիք, որ օրինական ճանապարհով այս խայտառակ հետեւանքը չի հեռացվելու (վերացվելու): Դուք պարտավոր էիք զոհվել, բայց թույլ չտալ, որ ընտրակեղծարարը շարունակի երկիրը կործանման տանող իր անխռով ընթացքը:

ՀԳ. *Օրերս բարեկամներիցս մեկը ՖԲ-ում Նապոլեոն Բոնապարտից մի միտք էր հրապարակել՝ ուղղված բոլոր մակարդակների դատավորներին. «Մարտադաշտում զոհված զինվորի մահն ամենագեղեցիկ մահը կլիներ, եթե չլիներ հանուն արդարության եւ օրենքի գերակայության զոհված դատավորի մահը»:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԾԱՌՈՒԿՅԱՆԻՆ «ԿՁԸՑՆԵԼ» ՉԻ ԼԻՆԻ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ԸՆՏՐԱԿԵՂԾԱՐԱՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՐՔԻ ՉԻ ԳՆԱՑԵԼ

*«Հրապարակի» զրուցակիցն իրավապաշտպան, վավերագրական ֆիլմերի ռեժիսոր **Յովհաննես Իշխանյանն** է:*

- ԱԱԾ աշխատակիցների կողմից Գագիկ Ծառուկյանին գետնին տապալելու կադրերը, երբ դրա անհրաժեշտությունը չկար, եւ այն, որ այդ կադրերը հրապարակայնացնում է Քննչական կոմիտեի ղեկավարը, ի՞նչ է՝ դա ժողովրդավարության բաստիոնի, ժողովրդավարության առաջամարտիկ ինքնահռչակված Փաշինյանի իմիջի մեջ տեղավորվո՞ւմ է:

- Ինձ թվում է, որ այդ թեման արդեն փակվել է՝ որպես ժողովրդավարության բաստիոն...

- Բայց եվրոպացի գործընկերները շարունակում են Փաշինյանին մեծարել «ժողովրդավարություն» բառով համեմված արտահայտություններով:

- Եվրամիությունը շատ բան է ասում, մեր բոլոր քաղբանտարկյալները Եվրամիության քաղբանտարկյալներն են: Եթե Սովետական Միության ժամանակ կային դիսիդենտներ, հայերի մեջ էլ կային դիսիդենտներ՝ շատ հայտնի գրողներ եւ այլն, նրանք այն ժամանակվա ճնշիչ ամբողջատիրական մեքենայի բանտարկյալներն էին, հիմա թե՛ Գագիկ Ծառուկյանը, թե՛ Աշոտ Մինասյանը, թե՛ Ավետիք Չալաբյանը, թե՛ Անդրանիկ Թեւանյանը, թե՛ Կարապետ Պողոսյանը, թե՛ Աշոտյանը, թող ներեն ինձ բոլորը, ում անունը չնշեցի, բոլորն այդ եվրոպական ժողովրդավարության քողի տակ բռնապետական քաղբանտարկյալներ են: Սովետական Միությունն էլ են, չէ՞, իրենք շատ ժողովրդավար երկիր համարել, բայց ամբողջատիրություն էր, իհարկե: Նույնն այս պարագայում է, եւ այն, որ Հայաստանում Եվրամիության գրասենյակի ներկայացուցիչը մենակ կոնկրետ քաղբանտարկյալների դեպքում է արտահայտվում, դա եւս ապացույց է, որ իրենց համար կան յուրայիններ, որոնք ունեն մարդու իրավունքներ, եւ կան չյուրայիններ, որոնց իրավունքները եւ նրանց հետ կապված օրենքի գերակայությունը չեն գործում: Դրա համար՝ խոսել այն կոնտեքստում, թե ինչի համար է Եվրամիությունը պաշտպանում Փաշինյանին եւ այլն, արդեն պարզ է, երբ դատարաններն էին սրանք գրավում, Եվրամիության եւ եվրոպական ընտանիքից ասում էին, որ Հայաստանը հետսովետական երկրների ժողովրդավարության դրախտն է: Դրա համար դա չպետք է դիտարկենք եվրոպական արժեքային կամ ժողովրդավարության, մարդու իրավունքների արժեքային կոնտեքստում, այլ զուտ հիմիկվա ֆաշիզմի վերածված Եվրոպայի կոնտեքստում, որը հանուն իր քմահաճույքների, Ռուսաստանի, Իրանի դեմ պայքարի, Չինաստանի դեմ պայքարի, զոհում է պետություններին: Տեսաք, չէ՞, Մարթա Կոսի ջեմը, ջեմի դիմաց ծախում են մեր ժողովրդավարությունը, ասում են՝ մարդու իրավունքները մեզ պետք չեն, մեզ ջեմն է պետք:

- Ծառուկյանից, ըստ Ձեզ, ինչի՞ համար է վրեժխնդիր լինում Փաշինյանը, հրապարակային նվաստացնում նրան, գործեր «կարում» նրա վրա:

- Դե պարզ է՝ Ծառուկյանը չի գնացել պայմանավորվածության Փաշինյանի հետ, երբ որ սկսել են այդ խեղկատակությունն անել՝ այդ 0.04 տոկոսի հետ կապված, ընտրատեղամասերի արդյունքները չեղարկելու: Պարզ է, որ Նիկոլ Փաշինյանը պետք է բանբեր ուղարկած լինի ինչ-որ մեկի տեսքով, որը պետք է պայմանավորվածություն ստեղծեր Գագիկ Ծառուկյանի հետ՝ եթե մանդատները տան, ապա իրենք պետք է աջակցեն սահմանադրական այս հանրաքվեին եւ այլն, եւ այլն: Հիմա, եթե Ծառուկյանը չի գնացել պայմանավորվածության ընտրակեղծարարձայնագրող դավաճանների հետ, լավ է արել եւ դրա համար այս օրին է: Բայց հետաքրքիրը գիտե՞ք, թե որն է. հիմա, հայերի իրավունքների այս պայքարի մեջ, փաստորեն, 3 խոշոր գործարար, մեծահարուստներ դարձել են ձախ՝ այն իմաստով, որ Ռուբեն Վարդանյանը, Սամվել Կարապետյանը, Գագիկ Ծառուկյանն իրենք են այն առաջամարտիկները, որպեսզի հայերի իրավունքները պաշտպանվեն, որպեսզի արցախցիների իրավունքները պաշտպանվեն, վերադարձի իրավունքը պաշտպանվի, պատմամշակութային ժառանգության իրավունքը պաշտպանվի, որպեսզի Եկեղեցու ավերմանը դեմ կանգնեն: Տեսաք այդ prank-ը, որ արել էին ԵԱՀԿ-ի թուրք նախագահի հետ, Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կառույցը, փաստորեն, աջակցում է հայկական եկեղեցու քանդմանը: Հիմա, փաստորեն, վերադարձել է ֆաշիզմին, մենք՝ հայերս էլ, գործարարների, մեծահարուստների հետ միասին աշխարհի կարգուկանոնի համար ենք պայքարում: Գագիկ Ծառուկյանի հենց այդ վիդեոները, որ իրեն տապալում են, բնականաբար, իր շրջապատի, մարզիկների ու այլոց համար է, որովհետեւ Գագիկ Ծառուկյանը հեղինակություն է իրենց մոտ: Ոնց որ երեխայի առաջ փորձեն հորը նվաստացնել, որպեսզի այն ուժը, որ տեսնում են, այլեւս չտեսնեն:

- Այսինքն, նաեւ հոգեբանական ներազդման համար էին տեսանյութերը հրապարակայնացրել:

- Հեղինակությունը գցելու համար՝ դա թուրքական քաղաքական մշակույթն է: Հիշո՞ւմ եք՝ Մանվել Գրիգորյանին էլ այդպես արեցին, բանտից լուսանկար հրապարակեցին: Մանվել Գրիգորյանի թեւի տակ գտնվող մարդիկ իրենց շատ ապահով էին զգում իր հովանոցի տակ, բայց երբ որ այդպես արեցին, ասեցին՝ արա, մենք էլ մեր կռիշը չունենք: Հիմա նույնը այստեղ են այդ հոգեբանական, իշխանատենչական գործիքը կիրառում: Եվ ես խորհուրդ կտայի, որ դա ոչ ոքի վրա չազդի: Հիմա ի՞նչ է եղել, 70 տարեկան մարդ է՝ նման բան էլ կարող է անեն, մեր քաղաքական մշակույթում հեղինակություններն այլեւս այդպես չեն ձեւավորվում, այլ ձեւավորվում են, թե ինչքանով է մարդը պատրաստ դավաճանի հետ պայմանավորվածության գնալ կամ չգնալ: Իսկ այն, որ նա չի գնացել դավաճանի հետ պայմանավորվածության, արդեն նշանակում է, որ նրան կզըցնել չի լինի:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ԲԱՔՈՒՆ ԳՈՂ Է ՓԱՇԻՆՅԱՆԻ ՄԱՏՈՒՑԱԾ «ՆՎԵՐԻՑ»

Հուլիսի 8-ին երկու ամսով կալանավորվեց ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկանը՝ Նիկոլ Փաշինյանի նախընտրական փուլում Փաշինյանի հնչեցրած «ուղիղ սպառնալիքների» կատարման շրջանակում: Մինչ այդ, ուժայինները զանգվածային գրոհ էին սկսել՝ խուզարկում էին գործարարին պատկանող շուրջ 70 հասցե, որոնք կապված են նրա եւ նրա բիզնեսի հետ, տասնյակ ժամեր խուզարկություններ են կատարել՝ խափանելով կարեւոր օբյեկտների աշխատանքն ու ստեղծելով անվտանգային վտանգավոր իրավիճակ, դաժանաբար ներխուժել են գործարարի տուն, դիմակներով իրավապահները ցուցադրական ու գռեհիկ ձերբակալություն են իրականացրել եւ տեսանկարել այդ ամենը՝ անմարդկային ձեւով գետնին տապալելով 70-ամյա գործչին եւ բերման ենթարկելով:

Դեպքին անդրադարձել են ռուսական եւ միջազգային մի շարք լրատվամիջոցներ, իսկ Reuters-ն ուղիղ տեքստով հիշեցնում է՝ ընտրություններից առաջ Հայաստանի վարչապետը խոստացել էր «հակազդել» ընդդիմադիր գլխավոր ուժերի դեմ, այդ թվում՝ Սամվել Կարապետյանի «Ուժեղ Հայաստանի», Ռոբերտ Քոչարյանի «Հայաստանի» եւ Գագիկ Ծառուկյանի ԲՀԿ-ի դեմ՝ վերահաստատելով համընդհանուր այն համոզմունքը, որ կատարվածը Փաշինյանի ուղիղ թելադրանքով է:

Սպասելի էր, որ Ծառուկյանի շուրջ կատարվող իրադարձություններին եւ նրա կալանավորմանը կանդրադառնային նաեւ ադրբեջանական լրատվամիջոցները, որոնք, ինչպես միշտ, բացառիկ ոգեւորությամբ են տիրաժավորում այդ ամենի վերաբերյալ հաղորդագրությունները, կադրերը եւ այլն: Գաղտնիք չէ, որ ալիեւյան ռեժիմը «ոխերիմ թշնամի» է համարում հայոց Արցախի, հայկական ինքնության, Հայ եկեղեցու եւ հայոց անժամանցելի արժեքների պաշտպան յուրաքանչյուր հայ գործչի, եւ դրանց դեմ ՀՀ ապազգային իշխանությունների ու անձամբ Փաշինյանի հետապնդումներն ու հալածանքները հարեւան երկրում ընդունում են մեծագույն բավականությամբ: Նշում են. «Փաշինյանն ամեն ինչ անելու է ժողովրդավարի իր կերպարն ու իշխանությունը պահպանելու համար», նրան հռչակում են «խաղաղության միակ պահապան»: Բացառիկ ցինիզմով են նկարագրում Ծառուկյանի առանձնատան շքեղությունն ու այնտեղ պահվող կենդանիներին: Ադրբեջանի քաղաքական, հասարակական ու մեդիահանրույթի պահվածքն ու արձագանքը սպասելի են, եւ նույնիսկ կարելի էր անտեսել, բայց ակնհայտ է, որ Ծառուկյանի՝ Հայաստանի առանցքային ընդդիմադիր գործիչներից մեկի հերթական կալանավորմամբ Փաշինյանը նոր «նվեր է մատուցում» Բաքվի իր տերերին: Այլ ողջամիտ ընկալում կամ հակառակ նախադեպ պարզապես չկա:

Արա ԱԼՈՅԱՆ

Միշուստինը դժգոհ է ռուսական բիզնեսի հանդեպ վերաբերմունքից

Ռուս քաղաքագետ, Պրիմակովի անվան համաշխարհային տնտեսության եւ միջազգային հարաբերությունների ուսումնասիրման ազգային կենտրոնի ավագ գիտաշխատող Ալեքսանդր Կռիլովը «Ալֆանյուզի» հետ զրույցում անդրադարձել է Հայաստանի եւ Ռուսաստանի վարչապետների՝ Եկատերինբուրգում կայացած հանդիպմանը: «Միխայիլ Միշուստինի եւ Նիկոլ Փաշինյանի հանդիպումից կարելի է մեկ եզրահանգում անել. գլխավորը, որ ցանկացել է Հայաստանի վարչապետին հայտնել վարչապետ Միշուստինը, այն է, որ ռուսական ղեկավարության մոտ մեծ անհանգստություն է առաջացրել Հայաստանում ռուսական բիզնեսի հանդեպ վերաբերմունքը: Խոսքն «էլցանցերի» մասին է եւ երկաթուղիների, ինչպես նաեւ՝ ատոմային էներգետիկայի: Շատ նախագծեր, որոնք գոյություն են ունեցել երկար տարիներ, հիմա կամ կասկածելի վիճակում են, կամ, առհասարակ, այնպիսի վիճակում, երբ ակտիվները, ինչպես «էլցանցերի» պարագայում է, սեփականատիրոջից փաստացի բռնագրավված վիճակում են գտնվում, ինչպես Սամվել Կարապետյանի դեպքում է: Այդպիսով, ռուսական կողմն իր մտահոգությունն է հայտնել»,- ասել է Կռիլովը:

Ըստ փորձագետի, ներկայում մնում է սպասել, թե որքանով է Փաշինյանն ականջալուր լինելու Միշուստինի մտահոգություններին: «Իր հերթին Փաշինյանն էլ հայտարարել է, որ կան տնտեսական հարաբերությունների մասով խնդիրներ, եւ հույս է հայտնել, որ դրանք կարգավորվելու են ԵԱՏՄ շրջանակներում: Ու այս դեպքում էլ պետք է սպասել ու տեսնել, թե ինչքանով է Միշուստինը պատրաստ՝ ընդառաջ գնալու Փաշինյանին: Սակայն փաստը, որ նախօրեին ձերբակալվել է Գագիկ Ծառուկյանը, խոսում է այն մասին, որ Հայաստանի ղեկավարությունը, ամենայն հավանականությամբ, շարունակելու է կոշտ քաղաքականությունն ու ճնշելու է իր համար պոտենցիալ վտանգ ներկայացնող ցանկացած քաղաքական ուժի, ներառյալ՝ նաեւ ռուսական բիզնեսի ներկայացուցիչներին: Դրա համար էլ, դժվար թե փոխվի ռուսական գործարարների հանդեպ հայկական իշխանությունների վերաբերմունքը, որոնք դիտարկվում են որպես զգալի քաղաքական գործոն Հայաստանի ներքաղաքական կյանքում»,- ամփոփել է Կռիլովը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱԿ

ԵՍ ԴԱ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՄ ՆՈՐ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ

1921 թ. Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերի իրավական վիճարկման նախաձեռնությամբ հանդես եկած «Վիլսոնյան Հայաստան» ՀԿ-ի նախագահ, հանքարդյունաբերության փորձագետ **Գեորգի Անտոնով-Միրզախանյանը** «Հրապարակի» հետ զրույցում խոսում է ՄԱԿ-ից ստացված պատասխանի, Հայոց ցեղասպանության՝ Իսրայելի ճանաչման եւ Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի խնդիրների մասին:

Գեորգի Անտոնով-Միրզախանյանի նախաձեռնությունը վերաբերում էր 1921 թ. Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերի իրավական վիճարկմանը: Նա դիմել է ՌԴ դատական ատյաններին, ստացել նույնաբովանդակ պատասխաններ՝ իրենք իրավասու չեն վերանայելու միջազգային պայմանագրերը: Ապա հարցը տեղափոխել է միջազգային իրավական հարթակ, դիմել է ՄԱԿ՝ բարձրացնելով այդ պայմանագրերի իրավական հիմքերը եւ դրանց հետեւանքների վերանայում պահանջելով:

- Մեր նախորդ զրույցից հետո ինչ զարգացումներ են եղել:

- ՄԱԿ-ի Ժնեւի գրասենյակի մարդու իրավունքների կոմիտեի (ՄԱԿ-ի դատարան) գլխավոր հանձնակատարից պաշտոնական պատասխան ենք ստացել: Մեզ հայտնել են՝ այն հանգամանքը, որ մենք նախապես անցել ենք ՌԴ պետական եւ դատական ատյաններով, ՄԱԿ-ին հնարավորություն է տվել ընդունել եւ քննարկել մեր դիմումը: Սա, կարծում եմ, շատ կարեւոր հանգամանք է, որովհետեւ միջազգային իրավական պրակտիկայում նախ պետք է սպառվեն ներպետական իրավական հնարավորությունները, նոր միայն հարցը տեղափոխվի միջազգային հարթակ: ՄԱԿ-ից նշել են, որ իրենց ընթացակարգերին, միջազգային կոնվենցիաներին եւ գործող իրավական նորմերին համապատասխան իրականացված նախնական ուսումնասիրություններից եկել են այն եզրակացության, որ վերջնական գնահատական եւ եզրակացություն տալու համար անհրաժեշտ են լրացուցիչ փաստեր ու ապացույցներ: Այժմ այդ ուղղությամբ էլ աշխատում ենք: Մեր իրավաբանների, պատմաբանների եւ տարբեր ոլորտների մասնագետների հատուկ խումբը լրացուցիչ ուսումնասիրություններ է կատարում, հավաքագրում է նոր փաստաթղթեր, աշխատում է վերացնել բացերը: Դրանից հետո կրկին դիմելու ենք ՄԱԿ: Այս անգամ մեր հայցադիմումն ավելի հիմնավորված եւ որակյալ կլինի: Աշխատանքներն ավելի կազմակերպված են՝ բացել ենք «Վիլսոնյան Հայաստանի» գրասենյակը, ստեղծել ենք պայմաններ՝ նման աշխատանքի համար: Այն համալրված է մասնագիտական գրականությամբ, արխիվային եւ բացատրական նյութերով, քարտեզներով, փաստաթղթերով:

- Վերջին օրերին քննարկվում է Հայոց ցեղասպանության՝ Իսրայելի կողմից ճանաչման հարցը: Կառավարությունն արդեն ընդունել է փաստը, առաջիկայում հարցը կքննարկվի բարձրագույն օրենսդիր մարմնում՝ Կնեսետում: Ի՞նչ ակնկալիքներ կարող ենք ունենալ:

- Անկեղծ ասած՝ ես այդ հարցում մեծ ակնկալիքներ չունեմ: Հայերիս համար, թե ինչ որոշում կկայացնի Կնեսետը, պարզ ասած՝ «ոչ տաք է, ոչ սառը»: Չեմ կարծում, թե պետք է այդ հարցին առանձնահատուկ նշանակություն տալ: Պատմության մեջ չեմ հիշում դեպք, երբ հրեական կողմը փորձած լինի իրական աջակցություն ցուցաբերել հայ ժողովրդին: Մեզ միշտ դիտարկել են սեփական շահերի համատեքստում: Հետեւաբար, եթե անգամ Կնեսետում որեւէ որոշում ընդունվի, ես դրանից մեծ սպասելիքներ չունեմ:

- Երկար տարիներ ՌԴ-ում աշխատել եք հանքարդյունաբերության ոլորտում: Այդ փորձը համադրելով ՀՀ իրողությունների հետ, ինչն եք համարում մեր ամենամեծ խնդիրը:

- Հայաստանի զարգացման ճանապարհին ամենամեծ խոչընդոտներից մեկն այն է, որ անկախությունից հետո մենք չկարողացանք արդյունավետ օգտագործել մեր հանքարդյունաբերական ներուժը: Խոսքը միայն հանքերի մասին չէ, այլ ամբողջ արդյունաբերական համակարգի: ԽՍՀՄ տարիներին, որքան էլ այսօր տարբեր գնահատականներ հնչեն այդ ժամանակաշրջանի վերաբերյալ, փաստ է, որ մեր փոքր հանրապետությունը լուրջ դերակատարում ուներ մետալուրգիայի, հանքարդյունաբերության, քիմիական արդյունաբերության եւ այլ ճյուղերում: Այդ ներուժը զգալի եկամուտ էր ապահովում միութենական տնտեսության համար: Այսօր էլ համոզված եմ՝ ունենք բոլոր հնարավորությունները՝ կարճ ժամանակում վերականգնելու այդ ներուժի զգալի մասը: Ունենք հանքահումքային հարուստ պաշարներ, մասնագետներ, գիտելիք, փորձ: Մարդկային ռեսուրսն էլ դեռ չի սպառվել: Բայց դրա համար պետք է փոխվի մեր վերաբերմունքը երկրի բնական հարստությունների նկատմամբ: ՀՀ ընդերքը եւ հանքահումքային ռեսուրսները պետք է ծառայեն ժողովրդին, ոչ թե առանձին խմբերի կամ ընկերությունների շահերին: Ես համոզված եմ, որ անկախության առաջին տարիներին այդ գաղափարը շատ ավելի հստակ էր արտահայտված օրենսդրության մեջ: 1995 թ. Սահմանադրությամբ ամրագրված էր, որ Հայաստանի հանքահումքային ռեսուրսները ժողովրդի սեփականությունն են: Հետագայում՝ 2005թ. եւ 2015թ., այդ դրույթը 2 անգամ փոփոխվեց: Նախ ձեւակերպվեց, որ ընդերքի հարստությունը պատկանում է պետությանը, ոչ թե ժողովրդին, իսկ ավելի ուշ սահմանվեց, որ այդ հարստությունը գտնվում է կառավարության տնօրինության ներքո: Դրան հաջորդեցին օրենքներ, որոնցով ընդերքի տնօրինման իրավունքը փաստացի փոխանցվեց պետական մարմիններին եւ պաշտոնյաներին: Ես համարում եմ, որ հենց այդ փոփոխություններից հետո ստեղծվեց այն միջավայրը, որի արդյունքում Հայաստանի ամենաթանկ հանքավայրերը եւ մետալուրգիական կոմբինատները տրվեցին երկարաժամկետ շահագործման: Արդյունքում ո՛չ ժողովուրդը, ո՛չ պետությունը երկար տարիներ չստացան այն բաժինը, որը պետք է ստանային երկրի բնական հարստություններից: Հաճախ ասում են՝ հանքերը մեծ գումարներ են բերում պետությանը: Ես այդ գնահատականին լիովին համաձայն չեմ: Եթե նայենք միջազգային փորձին, կտեսնենք այլ պատկեր: Զարգացած երկրներում հանքարդյունաբերությունից ստացվող եկամուտների մեծ մասը մնում է տվյալ երկրի պետական բյուջեում: Շատ երկրներում այդ մասնաբաժինը կազմում է առնվազն 51-75 տոկոս: Մեզ մոտ պատկերն այլ է: Առաջին անգամ 2021 թ. հնարավոր եղավ լրջորեն բարձրացնել այդ հարցը: Զրույց ունեցանք էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի հետ: Մեր քննարկումն արդյունավետ ստացվեց: Հարցը բարձրացվեց վարչապետի մոտ, արդյունքում հնարավոր եղավ հանքարդյունաբերության ոլորտը բերել հարկային դաշտ: Սակայն, իմ տեղեկություններով, այսօր պետության ստացած մասնաբաժինը փոքր է: Բաց աղբյուրներից իմանում ենք, որ այն տարբեր հաշվարկներով կազմում է ընդամենը 7 տոկոս: Երբեմն նշվում է նաեւ 22,5 տոկոսի մասին, բայց, իմ կարծիքով, այդ տարբերության մեջ ներառված են նաեւ բնապահպանական, հողերի ռեկուլտիվացիայի, տարբեր հիմնադրամների եւ այլ վճարներ: Եթե խոսենք հենց պետական բյուջեի անմիջական եկամուտների մասին, ապա տարբերությունը միջազգային փորձի համեմատ ահռելի է: Կառավարությունը 2025թ. փորձեց փոխել իրավիճակը՝ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի օրինակով բարձրացնել հարկային բեռը եւ ավելացնել բյուջեի մուտքերը: Սակայն հանդիպեց դիմադրության: Ոլորտի ազդեցիկ շրջանակները կարողացան կանգնեցնել այդ գործընթացը: Ի վերջո, ձեռք բերվեց ինչ-որ փոխզիջում, սակայն համակարգային փոփոխություն այդպես էլ տեղի չունեցավ:

- Ինչ ելք եք տեսնում:

- Ելքը մեկն է. 1918 թ. Սարդարապատում ժողովուրդը ոտքի կանգնեց՝ պաշտպանելու իր ապրելու եւ հարատեւելու իրավունքը: Այսօր, իմ համոզմամբ, մենք կանգնած ենք ոչ պակաս կարեւոր խնդրի առաջ: Այս անգամ պայքարը զենքով չէ, այլ՝ օրենքով, պետական մտածողությամբ եւ ազգային շահը պաշտպանելու կամքով: Ես դա անվանում եմ նոր Սարդարապատ: Պետք է համախմբվել եւ վերականգնել ժողովրդի օրինական իրավունքները սեփական բնական հարստությունների նկատմամբ: Եթե ուզում ենք ունենալ ուժեղ պետություն, զարգացած տնտեսություն եւ սոցիալական արդարություն, պետք է կարողանանք այնպես կազմակերպել մեր հանքարդյունաբերությունը, որ դրա հիմնական շահառուն լինեն ՀՀ-ն ու նրա քաղաքացին: Վստահ եմ, մենք կվերադառնանք այն սկզբունքին, ըստ որի՝ երկրի բնական հարստությունները նախեւառաջ պետք է ծառայեն այդ երկրի ժողովրդին:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

«ԱՆՍՊԱՍԵԼԻ ՀՅՈՒՐԸ»՝ ԺԱՄԱՆԱԿԻՑ ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆ Է

Խորհրդային կինոարվեստը հաճախ է դիմել Հայրենական մեծ պատերազմի թեմային: Դա խորհրդային կինոյի առանցքային թեմաներից է՝ ֆաշիզմին հաղթած խորհրդային ժողովուրդն իր հաղթանակը նաեւ կինոյով է ամրագրել: Սակայն բոլոր կինոնկարները չէ, որ ռազմաճակատային գործողությունների մասին են: Շատ ռեժիսորներ փորձել են ցույց տալ պատերազմն այլ ռակուրսից, թե ինչպես է պատերազմը շարունակել ապրել մարդկանց հիշողություններում, ազդել մարդկանց ճակատագրերի վրա: Ռեժիսոր Վլադիմիր Մոնախովի՝ 1972 թվականին էկրան բարձրացած «Անսպասելի հյուրը» ֆիլմի հիմքում Էմանուիլ Կազակեւիչի «Ցերեկային լույսի ներքո» վիպակն է: Այն սովետական կինոյի խոր հոգեբանական գործերից է:

Նախկին զինվորական, ճակատում կռված Անդրեյ Սլեպցովը գալիս է Մոսկվա, որպեսզի կատարի զոհված հրամանատար Վիտալի Նեչաեւի հանդեպ ունեցած բարոյական պարտքը: Այցը, սակայն, դառնում է լուրջ բարոյական փորձություն՝ իրադարձության բոլոր մասնակիցների համար: Սլեպցովը «հայտնաբերում» է, որ զոհված հրամանատարի կինը վաղուց դասավորել է կյանքն ու ապրում է նոր իրականությամբ, իսկ զոհված ամուսնու մասին հիշողությունն ամենեւին էլ այնպիսին չէր, ինչպիսին պատկերացնում էր պատերազմ անցած զինվորը: Կինոնկարի գլխավոր ասելիքը ոչ թե անցյալի եւ ներկայի պայքարն է, այլ նույն մարդու մասին տարբեր մարդկանց տարբեր պատկերացումները: Սլեցպովի համար Նաչաեւն անվախ սպա էր, իրական լիդեր, բացառիկ ազնիվ եւ խիզախ մարդ: Ընտանիքի համար՝ հանդարտ ու համեստ ամուսին ու հայր, որին պատերազմը խլել է հարազատներից: Ֆիլմը դիտելիս ակամա մտածում ես՝ իսկ, առհասարակ, հնարավո՞ր է մարդուն ճանաչել ամբողջովին, եթե ամեն մեկը նույն մարդու անհատականության մի կողմը կարող են բացահայտել միայն: Կինոնկարում դրամատիկ պահեր չկան, ոչ էլ՝ ազդեցիկ զարգացումներ: Լարվածություն կա նախեւառաջ խոսակցությունների, հայացքների եւ լռության մեջ:

70-ականների սովետական հոգեբանական ֆիլմերը նման զսպվածություն էին սիրում, որովհետեւ, իրականում, ռեալ ողբերգությունն ամպագոռգոռ խոսքերով չի արտահայտվում, այլ կորցրածը վերադարձնել չկարողանալու տառապանքով: Կինոնկարը դիտելիս հասկանում ես, թե ինչ բան է մարդկային հիշողությունը՝ որ այն փաստերի պահոց չէ, այլ փոփոխվող երեւույթ: Յուրաքանչյուրը՝ նույն մարդու մասին իր հիշողությունը, անցյալի մասին իր ճշմարտությունը, եւ այդ ճշմարտություններից ոչ մեկն ամբողջական չէ ու նաեւ՝ կեղծ էլ չէ: Անցյալը, իհարկե, հնարավոր չէ վերականգնել բացարձակ օբյեկտիվությամբ, բայց մարդկային էմոցիաները դրանք անպայման փոփոխում են: Ողբերգությունը շարունակում է մնալ մարդկային հիշողության մեջ, սակայն կյանքն առաջ է ընթանում, եւ ապրել շարունակող մարդկանց դատապարտել չի կարելի: Կինոնկարում էլ, ի դեպ, նման դատապարտում չկա: Հակառակը՝ կա ընկալում, որ կյանքը շարունակվում է, ու մարդը, կորստի ցավն ու հիշողությունը սրտում պահած, շարունակում է ապրել:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գագիկ Ծառուկյանի նկատմամբ անհամաչափ բռնի ուժի կիրառումն ու գետնին տապալելու կադրերը մեծ վրդովմունք են առաջացրել հանրության մեջ եւ լայն քննարկումների առարկա դարձել:

ՄԻՊ-Ը ՀԱՍՑԵԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԱՆՈՒՄ, ՈՐ ԱԱԾ-ԻՑ ՉԳԱՆ՝ ԻՐԵՆ ԷԼ ՔԱՅՈՒ ՏԱԿ ԳՑԵՆ

Մարդիկ նաեւ պահանջում են, որ Ծառուկյանի եւ մյուս ընդդիմադիր գործիչների, ընդդիմադիր հայացքներ ունեցող քաղաքացիների նկատմամբ բռնի ուժի կիրառմանն արձագանքի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը:

Երեկ ՄԻՊ-ը մի հայտարարություն տարածեց, սակայն իր բնորոշ ոճի մեջ՝ լղոզված, առանց հստակ գնահատականների, առանց կոնկրետ հասցեատերերին նշելու:

Մեզ հետ զրույցում իրավապաշտպան **Հովհաննես Իշխանյանն** ասաց, որ պետք է օգնել ՄԻՊ-ին, որովհետեւ կարծես Մանասյանն ուզում է արձագանքել, սակայն չգիտի, թե ինչպես անի դա: «ՄԻՊ-ն արձագանքեց նաեւ մարդկանց խտրականության ենթարկելու, նրանց ընտրելու իրավունքից զրկելու հետ կապված, սակայն հասցեական չի անում՝ դիվանագիտորեն է անում, որ ԱԱԾ-ից չգան, իրեն քացու տակ գցեն, տապալեն, բայց փորձում է մի քիչ մոտենալ մարդու իրավունքների պաշտպանության առաքելությանը: Կամաց-կամաց, վախվորելով՝ փորձում է: Եկեք այս շրջանն օգտագործենք ու ՄԻՊ-ին փորձենք ուժեղացնել, որ մարդու իրավունքները պաշտպանի, ոչ թե Նիկոլի վայրագությունները»,- շեշտեց իրավապաշտպանը: Իշխանյանը հորդորեց հիշել, թե ՄԻՊ-ն ինչպես է ընտրվում՝ Ազգային ժողովի 3/5-ով: Այն ժամանակ Ազգային ժողովում ՔՊ-ն 71 պատգամավոր ուներ եւ 65 ձայնով ընտրում էր ՄԻՊ-ին, հարց է առաջանում՝ այդ մարդը կարո՞ղ է անկախ լինել՝ հռետորական հարց է տալիս Իշխանյանը: «Բնականաբար, ՄԻՊ-ն անկախ լինել չի կարող, եւ մեր խնդիրն է՝ հասկանալ, թե ոնց կարող ենք այս իրավիճակում, երբ Սահմանադրությունը հնարավորություն չի տալիս ՄԻՊ-ին անկախ լինել, փորձենք գոնե անկախության նշույլներ հաղորդել ՄԻՊ-ին: Ես համոզված եմ, որ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում աշխատակիցներ կան, որոնք շատ լավ ընկալում են այս իրավիճակը, իրենց դուր չի գալիս, բայց այս գերության մեջ իրենք, այնուամենայնիվ, փորձում են մարդու իրավունքների պաշտպանության կողմը բռնել, ոչ թե ինչ-որ 150 հազար հոգու էթնիկ զտման ենթարկած թափթփուկների»,-եզրափակեց Հովհաննես Իշխանյանը:

Իրավապաշտպան **Զառա Հովհաննիսյանը**, սակայն, կարծում է, որ ՄԻՊ-ը Գագիկ Ծառուկյանի դեմ կիրառված բռնի ուժի կիրառման մասով հայտարարության մեջ սկզբունքներին է անդրադարձել: «Այնպես չէ, որ դա այլ արձագանք կարող էր ունենալ, որովհետեւ ՄԻՊ-ն այն ինստիտուտն է, որը սկզբունքների մասին է, հիշեցնում է մարդու իրավունքների հիմնարար կետերը: Կոնկրետ դեպքի հետ կապված կարելի է ասել, որ պետությունն այն ամբողջական համակարգն է, որն ունի թե՛ վերահսկողական, թե՛ կանխարգելման գործառույթ, այսինքն՝ այդ բոլոր գործառույթները չկատարելու դեպքում վերջում ցուցադրել այսպիսի ցուցադրական հարկադրանքի, ուժի նվաստացնող տեսարաններ, կարծում եմ, հենց այն մնացած ֆունկցիաների չկատարման արդյունքն է: Օրինակ, կենդանիների օգտագործման, պահման հետ կապված, նրանց անազատության մեջ պահելու եւ խնամելու հետ կապված բազմաթիվ գործառույթներ ունի պետությունը: Նույնը վերաբերում է քաղաքական, տնտեսվարող սուբյեկտների վերահսկողության, կանխարգելման մեխանիզմներին, եթե պետությունն այդ ամեն ինչը չի իրականացնում, հետո վերջում ցուցադրական նվաստացուցիչ տեսարաններ է բեմադրում, արդեն դա վերածվում է մարդու իրավունքների խախտումների, ինչը, կարծում եմ, ՄԻՊ-ն ավելի իրավական շարադրմամբ ներկայացրել է»,- ասաց Հովհաննիսյանը:

Հարցին, թե արդյո՞ք ՄԻՊ-ի գործառույթը կոնկրետ քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը չէ, ու արդյոք հասցեական չպե՞տք է լինեն ՄԻՊ-ի արձանագրումները, ասաց, որ ՄԻՊ-ի գործառույթները հենց քաղաքացիների իրավունքների պաշտպանությունն է՝ պետության ոտնձգություններից, տարբեր մարմիններից, այդ թվում՝ նաեւ իրավապահ համակարգից: «Կարելի էր ավելի սուր գրել, բայց բոլոր բաները նշել է իրականում, հիմա սա լեզվի խնդիր է՝ ավելի սուր կասի, թե ավելի հասցեական կասի, փաստերը կարծես թե նշված են»,- նշեց Զառա Հովհաննիսյանը եւ հավելեց, որ ՄԻՊ-ը նշանակվում է Ազգային ժողովի քաղաքական մեծամասնության կողմից: Դա նշանակում է, որ Անահիտ Մանասյանը կաշկանդված է այն հանգամանքով, որ իրեն ընտրել է ՔՊ-ն: «Մշտապես այդպես է եղել, այդ մասին միշտ հայտարարել ենք եւ միակ ժամանակահատվածը հեղափոխությունից հետո էր, երբ ՄԻՊ-ը կարողանում էր ավելի սուր քննադատություն հնչեցնել՝ համարելով, որ նոր քաղաքական վերնախավից կախվածություն չունի, որովհետեւ իրենք չեն ընտրել իրեն: Դա մշտական լինում է պետական ինստիտուտներում, ես չեմ կարող առանձնացնել հենց ՄԻՊ-ը որպես կառույց»,- եզրափակեց Զառա Հովհաննիսյանը:

Հայկա ԱԼՈՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 9.07.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԵՐԱԽՏԱՄՈՌՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՁ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՔՍՏՄՆԵԼԻ ԱՐԱՏՆԵՐԻՑ Է

«Հրապարակի» զրուցակիցը ռեժիսոր **Հովհաննես Գալստյանն** է:

- Նիկոլ Փաշինյանը, ի տես աշխարհի, կյանքի է կոչում իր սպառնալիքները. ընտրություններից առաջ խոստացել էր բանտարկել ընդդիմադիր առաջնորդներին, այդ թվում՝ Գագիկ Ծառուկյանին: Ծառուկյանին կալանավորեցին, անգամ նրան պատկանող կենդանիներն առգրավեցին: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ է իշխանությունը թիրախավորել հենց Գագիկ Ծառուկյանին:

- Դատելով խուզարկության, բերման ենթարկելու գործընթացի ցուցադրական բովանդակությունից՝ սա հերթական անտաղանդ սցենարով վատ բեմադրված շոուն է, որն ավելի ու ավելի ցածրաճաշակ ու անհետաքրքիր է դառնում, բայց, ցավոք, գնալով ձեռք է բերում մեծ զանգվածայնություն, խաթարելով տասնյակ հազարավոր քաղաքացիների կյանքի բնականոն ընթացքը: Օրեր առաջ իշխանությունը գողացավ մոտ 60 հազար մեր քաղաքացիների ձայները, այսօր զրկում է մի քանի տասնյակ հազար քաղաքացիների աշխատանքի իրավունքից: Ու այս ամենն արվում է մեկ բանի համար, որովհետեւ Գագիկ Ծառուկյանը հրաժարվեց գնալ իշխանության հետ գործարքի:

- ԲՀԿ առաջնորդը տարիներ շարունակ աջակցել է տարբեր մշակութային եւ սպորտային գործիչների, սակայն նրանցից շատերն այժմ վախենում են խոսք ասել, աջակցել Ծառուկյանին: Ինչո՞ւ:

- Չունեմ այդ հարցի պատասխանը, երախտամոռությունն ինձ համար ամենաքստմնելի արատների շարքում է: Բայց ես կարծում եմ՝ հասարակությունն այդ գործիչներին պետք է մեղադրի ոչ թե երախտամոռության, այլ՝ հարմարվողականության համար: Մարդը կենդանի արարածների մեծամասնությունից տարբերվում է արդարության հանդեպ սրված զգացումով, ու եթե նրանք լռեցնում են իրենց մեջ արդարության բնական պահանջը, կարող են շատ արագ վերածվել կենդանու:

- Գագիկ Ծառուկյանի ուժին կեղծիքների եւ ապօրինությունների միջոցով Փաշինյանի ռեժիմը թույլ չտվեց գնալ խորհրդարան:

- Այն, ինչ տեղի ունեցավ բոլորիս աչքի առաջ, մեկ ձեւակերպում ունի՝ քվեագողություն: Բոլորիս աչքի առաջ իշխանությունը յուրացրեց ԲՀԿ-ին տրված 60 հազար ձայները: Դա կարող է չնչին բան թվալ Արցախի կորստի, երիտասարդ սերնդի կործանման, Հայաստանի շահը սակարկման դնելու դիմաց՝ հանցագործություններ, որոնց մեջ այս իշխանությունն արդարացիորեն մեղադրվում է մեր հասարակության մի զգալի մասի կողմից: Բայց քվեագողությունն անխուսափելիորեն հանգեցնում է լեգիտիմության կորստի, իսկ լեգիտիմության կորուստը վաղ թե ուշ հանգեցնում է անխուսափելի երկընտրանքի՝ կա՛մ հաստատել բացարձակ դիկտատուրա, կա՛մ հրաժարվել իշխանությունից: Ու ես հույս ունեմ, երբ այս իշխանությունը կանգնի այդ ընտրության առաջ, մեր ժողովուրդը չի թողնի, որ նա ինքնագլուխ կայացնի բոլորիս համար ճակատագրական այդ որոշումը:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am